# Ազգ
Azg

17 ՅՈՒԼԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 133 (4269)

ISSN: 1829-1651


## Ռուսաստանը «Նաբուկո» գազամուղը լուրջ մրցակից չի համարում

ՄՅՈՒՆԽԵՆ, 16 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՌԴ-ի առաջին փոխվարչապետ Վիկտոր Զուբկովը չորեքշաբթի հայտարարել է, որ Ռուսաստանը «Նաբուկո» գազամուղը լուրջ մրցակից չի համարում:

«Մենք չենք գտնում, որ «Նաբուկո»-ն ինչ-որ լուրջ մրցակից է մեր նախագծերի համար, որոնք դուք լավ գիտեք, խոսքը «Հյուսիսային հոսք» եւ «Հարավային հոսք» նախագծերի մասին է»,- ասել է Զուբկովը «Պետերբուրգյան երկխոսություն» համաժողովի շրջանակներում կայացած մամուլի ասուլիսում: Նրա խոսքով՝ «Նաբուկո»-ի վերաբերյալ դիրքորոշումը քանիցս ներկայացրել են թե՛ Ռուսաստանի նախագահը, թե՛ կառավարության ղեկավարը:

Թուրքիայի, Ավստրիայի եւ Հունգարիայի կառավարությունների ղեկավարները եւ Բուլղարիայի եւ Ռումինիայի էներգետիկական ընկերությունների ղեկավարները հուլիսի 13-ին միջկառավարական համաձայնագիր են ստորագրել «Նաբուկո» նախագծի վերաբերյալ:

## Ղարաբաղյան բանակցային գործընթացի մի քանի երեսը

Զարմանալի բաներ են կատարվում հայկական աշխարհի հայաստանյան եւ ղարաբաղյան մասերում. մի տարի քննելուց եւ մադրիդյան սկզբունքների մասին տեւական ժամանակ խոսելուց հետո հիմա եւ միանգամից է միայն պարզվել, որ «պատասխանատու եւ շրջադարձային» փուլում ենք եւ հայկական զույգ պետությունների ապագան հիմա է վճռվում, որ բանակցային գործընթացում պետք է փոխվի խեղված ձեւաչափը, ԼՂՀ-ն հանդես գա իբրեւ լիիրավ կողմ, եւ որ՝ հայությունը թույլ չի տալու ոտնահարել իր արդարացի իրավունքները: Սա երեկ իշխանություն, այսօր ընդդիմություն ՀՅԴ-ի մտահոգությունն է, ով այսօր դեմ չէ ԱԳ նախարարի հրաժարական պահանջել, չնայած այդ նախարարը միայն շատ կարճ ժամանակ է նախարար, ու նրան, ինչ կռում է նա ղարաբաղյան բանակցությունների ընթացքում, հավասար մասնակից են Հայաստանի բոլոր, պնդում ենք՝ բոլոր քաղաքական ուժերը՝ տարբեր ժամանակներում իշխանության մեջ լինելով եւ տարբեր ժամանակներում իրենց լիազորած նախագահներին թույլ տալով գոնե լսել այն, ինչ նրանց առաջարկվում է: Հրաժարվում ենք հավատալ, որ հայոց քաղաքական վերնախավի գոնե առաջին դեմքերը տեղյակ չեն եղել, թե այս կամ այն հանգրվանում ինչի մասին է եղել խոսքը բանակցային գործընթացում: Լավ, սխալի կեսից հետ գնալը կրկնակի խրախուսական քայլ համարենք: Սակայն խնդիրն այն է, որ լայն հասարակությունը շփոթված է եւ չգիտի՝ ում հավատալ:




Իշխանական տարբեր շրջանակներից շարունակում են պնդել, որ համաձայնեցված ծրագիր գոյություն չունի, այլ ընդամենը առաջարկություններ՝ որպես բանակցությունների հիմք, եւ եթե դեռ չկա ամբողջական համաձայնություն՝ ինչի՞ մասին եք վիճում, դեռ ավարտուն փաստաթուղթ չկա՝ դրա համար էլ շարունակում ենք բանակցել: Նույն՝ իշխանական մեկնաբանություններով, որոնք հղում են անում ադրբեջանցի քաղաքական գործիչների խուճապային պնդումներին՝ բացահայտված մադրիդյան սկզբունքները, ոչ ավել, ոչ պակաս, «Ադրբեջանի համար Լեռնային Ղարաբաղը մեկընդմիշտ կորցնելու ծրագիր են»:

Տես էջ 2



## Ավիավթարից զոհվել է 36 հայ, որից 5-ը՝ Հայաստանի քաղաքացիներ

**Կառավարության երեկվա նիստը սկսվեց մեկ րոպե լռությամբ՝ կառավարության անդամները հարգեցին Թեհրան- Երեւան չվերթի վթարված «Տու-154» օդանավի զոհերի հիշատակը: Այնուհետեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ դեպքի առթիվ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի գլխավորությամբ ստեղծվել է օպերատիվ շտաբ, որը զբաղվում է զոհվածների հարազատներին դեպքի վայր տեղափոխելու, հուղարկավորության ծախսերի, պարտավորությունների տրամադրման եւ այլ հարցերով:**

**Վթարված օդանավի վերաբերյալ նոր տեղեկություններ հայտնեց կառավարությանն առընթեր քաղավիացիայի գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսեսյանը: Մասնավորապես, ամբողջապես ճշտված է ուղեւորների ցուցակը, օդանավում եղել է 36 հայ, որոնցից 5-ը՝ 3 ուղեւոր եւ 2 ավիատեխնիկ՝ Հայաստանի քաղաքացիներ, 4 երեխա, որից 1-ը՝ հայ: Գտնվել են ինքնաթիռի երեք սեւ արկղերը, որոնք ուղարկվել են Թեհրան: Եթե արկղերը վնասված չլինեն, կվերծանվեն, եթե վնասված լինեն, կուղարկվեն Մոսկվա՝ վերծանելու համար: Արտյոմ Մովսեսյանը հայտնեց, որ Իրանից Հայաստան է ժամանելու հատուկ ինքնաթիռ, որը զոհվածների շուրջ 50 հարազատներին տեղափոխելու է Թեհրան: «Կասպյան ավիաընկերությունը» զոհվածների ընտանիքներին յուրաքանչյուր անձի համար տրամադրելու է 32 հազար եվրո ապահովագրավճար:**

**Միաժամանակ, կառավարության որոշմամբ, պետբյուջեից 7,5 մլն դրամ է հատկացվելու վթարված օդանավի զոհերի ընտանիքներին օժանդակություն ցուցաբերելու նպատակով: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Գեւորգ Պետրոսյանը նշեց, որ յուրաքանչյուր զոհված ՀՀ քաղաքացու համար կհատկացվի 1,5 մլն դրամ: 675 հազար դրամ կտրամադրվի Երեւանի քաղաքապետարանին՝ հուղարկավորությանն աջակցելու նպատակով «Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ-ին տրամադրելու համար (135 հազար դրամ յուրաքանչյուր զոհվածի հաշվով):**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Իրան են հասցրել զոհվածների հարազատներին

**Երեկ Իրանի մայրաքաղաքի «Իմամ Խոմեյնի» միջազգային օդանավակայանում Թեհրան-Երեւան վթարված ինքնաթիռի ուղեւորների հարազատներին դիմավորել են Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության ներկայացուցիչները: Զոհվածների հարազատներին են ուղեկցել նաեւ հոգեբան եւ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության ներկայացուցիչ: Ըստ աղբյուրների, Իրանի իշխանությունները ՀՀ դեսպանությանը ցուցաբերում են անհրաժեշտ աջակցություն:** Ն. Մ.

## Էդվարդ Նալբանդյանը ԼՂՀ-ում

Երեկ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը այցելել է Ստեփանակերտ, որտեղ նրան ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Զրույցն ընթացել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջը:

Հանդիպումից հետո, լրագրողների հարցերին պատասխանելիս՝ **Է. Նալբանդյանը** Մեդվեդեւ-Օբամա-Սարկոզի հայտարարության մասին ասել է, թե գնահատում է երեք համանախագահ երկրների նախագահների կողմերին աջակցելու ջանքերը՝ մոտեցնելու դիրքորոշումները եւ ընթանալու կարգավորման ուղղությամբ: Ըստ արտգործնախարարի՝ մադրիդյան փաստաթղթի առաջարկների մի մասի շուրջը բանակցություններ են ընթանում, կան եւ այնպիսիք, որոնք չեն քննարկվում: Նա հիշեցրել է, որ այնտեղ կան երեք սկզբունքներ, որոնց մասին Հայաստանը բազմիցս հայտարարել է՝ Ղարաբաղի իրավական կարգավիճակը ԼՂ ժողովրդի կամքի արտահայտությամբ պետք է որոշվի՝ իրավական պարտադիր ուժ ունենալով, անվտանգության երաշխիքները եւ Հայաստանի հետ Ղարաբաղի ցամաքային կապի առկայությունը աներկբա պետք է լինեն: Բացի այդ՝ Հայաստանը մշտապես ասել է կարգավորման երեք սկզբունքների՝ ինքնորոշման, տարածքային ամբողջականության եւ ուժի չկիրառման մասին, սա հրապարակված մանրամասներում առկա է, մինչդեռ Ադրբեջանը շարունակում է խոսել միայն տարածքային ամբողջականությունից:

Իսկ ադրբեջանցի փախստականների՝ Ղարաբաղ վերադարձի վերաբերյալ, ինչի մասին մադրիդյան սկզբունքներում եւս խոսվում է, ըստ նախարար Նալբանդյանի՝ քննարկում չի ընթանում, այս հարցին անդրադարձ է լինելու հիմնախնդրի վերջնական կարգավորումից հետո, ավելի լայն համատեքստում՝ 400 հազ. հայ փախստականների հարցը եւս նկատի ունենալով:

Բանակցային գործընթացին ԼՂՀ-ի մասնակցելը Է. Նալբանդյանը համարում է անհրաժեշտություն, խաղաղ գործընթացի արդյունավետության երաշխիք: Նա ընդգծել է, որ ԼՂՀ կարծիքը Հայաստանի համար մեծ նշանակություն ունի, որը ոչ միայն չենք կարող անտեսել, այլեւ առանց Արցախի ժողովրդի եւ ղեկավարության հավանության որեւէ համաձայնություն չի լինի: **Մ. Խ.**

## Ադրբեջանը միջնորդ՝ Սիրիա-Իսրայել բանակցություններում

**Ինչպես նշում է Նյու Յորքի Turkishny.com կայքէջը, Ադրբեջանը ձեռնամուխ է եղել ստանձնելու միջնորդական առաքելություն Սիրիա-Իսրայել բանակցություններում, որը նախապես Թուրքիան էր ստանձնել: Միջնորդության հարցը Բաքվում քննարկվել է հունիսի 28-ին Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի Ադրբեջան այցելության ընթացքում:**

**Ի դեպ, Պերեսի այցին արձագանքելով բուռն հակազդեցությամբ, Թեհրանը Բաքվից հետ էր կանչել Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանին: Այնուհետեւ Շիմոն Պերեսի այցին հետեւել էր Սիրիայի նախագահի հուլիսի 8-9 կայացած այցելությունը Ադրբեջան: Դրա ընթացքում էլ Իլհամ Ալիեւը Բաշար Ասադին էր փոխանցել Իսրայելի նախագահի Սիրիա-Իսրայել բանակցություններում Ադրբեջանի միջնորդական առաքելությանը վերաբերող ուղերձը:**

**Ենթադրվում է, որ Սիրիա-Իսրայել բանակցային գործընթացին որպես միջնորդ, Ադրբեջանից բացի, կներգրավվեն նաեւ ԱՄՆ-ը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսն ու Լիբանանը: Օգտվելով առիթից նշենք, որ անցած շաբաթ նախագահ Պերեսը այցելել էր նաեւ Եգիպտոս, որտեղ նախագահ Հոսնի Մուբարաքին իրազեկել է այն ուղերձի մասին, որը Բաքվում Ալիեւը փոխանցել էր նախագահ Ասադին:**

Հ. Չ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Ներկայացնում ենք Ֆրեզնոյի երկու նշանավոր հայերի՝ Վիլյամ Սարոյանի եւ Մանուել Թոլեգյանի արվեստի շուրջն ունեցած զրույցների վերջին՝ եզրափակիչ մասը, նմանապես գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի ուշագրավ խոհագրության երկրորդ հատվածը՝ սեւեռուն, տեւական հայացք հայ ժողովրդի պատմական անցյալին ու ներկային՝ հարցադրումներ, եզրահանգումներ:

Վալերի Գերգիեւի ղեկավարությամբ Երեւանում մայիսին կայացած Մարիինյան թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի հյուրախաղերի մասին՝ Սվետլանա Սարգսյանի հոդվածում:

Լեւոն Սարգսյանի հրապարակախոսությունը՝ հայկական եւ օտար սերիալներում հնչող հայերենի համեմատական վերլուծությամբ:

Արձակագիր Նորայր Ադալյանի անդրադարձը արգենտինահայ Պետրոս Հաճյանի «Ճանապարհ դէպի Կարկեմիշ» գրքին:

Հայ երաժշտության նվիրյալ Գեորգի Թալալյանին նվիրված փառատոնի առիթով Արփիկ Մուրադյանի խոհերը:

Մարիամ Մուղդուսյանի անդրադարձը հայտնի վնագործ-վարպետ, ջութակահար Մարտին Երիցյանին եւ նրա անկրկնելի արվեստին:

**Մ. Բ.**

## Թուրքիան նախապատրաստվում է Հայաստանի հետ ֆուտբոլային հանդիպմանը

### *Եթե դա անցկացվի Կեսարիայում, ապա քաղաքի վերանորոգված մարզադաշտը կբացվի այդ հանդիպումով*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

2008-ի սեպտեմբերի 6-ին, արձագանքելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրավերին, Երեւան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը: Թեեւ այցի առիթը Հայաստան-Թուրքիա ազգային հավաքականների ֆուտբոլային հանդիպումն էր, սակայն նախագահ Գյուլի այցը իրականացվեց նրա տիկնոջ Հայրունիսայի ուղեկցությամբ: Թերեւս դրանով էլ ընդգծվեց, որ Թուրքիայի նախագահն այդ այցին մեծ կարեւորություն է տալիս: Ի դեպ, Երեւանից հետո Բաքու ուղեւորվելիս, Աբդուլլահ Գյուլն իր պաշտոնական այցը իրականացրեց առանց տիկին Հայրունիսայի:

Ֆուտբոլային պատասխան խաղը նշանակված է հոկտեմբերի 14-ին: Տրամաբանական է, որ Աբդուլլահ Գյուլն էլ փոխադարձաբար Թուրքիա հրավիրեր նախագահ Սերժ Սարգսյանին: Հրավերն արդեն արվել է: Ավելին, որպես երկու երկրների հավաքականների ֆուտբոլային հանդիպման վայր նշվել էր նախագահ Գյուլի ծննդավայր Կեսարիայի «Քադիր Հաս» մարզադաշտը, որը վերջերս հիմնովին վերանորոգվել է, տեղավորում է 32.500 ֆուտբոլասերի:

Ենթադրվում էր, որ Կեսարիայի վերանորոգված մարզադաշտը կբացվի Թուրքիա-Հայաստան հանդիպումով: Սակայն թուրքական կրթական համակարգի աշխատողների արհեստակցական միության Կեսարիայի քաղաքային 2-րդ մասնաճյուղի ապրիլին ձեռնարկած հակահայ քարոզարշավն ու «Չեմ ուզում իմ քաղաքում տեսնել ազերի եղբորս դահիճներին» ձեւակերպմամբ ստորագրահավաքը գերազանցեցին ենթադրությունները:

Տես էջ 3

Ընթացիկ

# Ալիեւի եւ Սարգսյանի հանդիպումը՝ մի քայլ, բայց ոչ ավելին

## *Ըստ փորձագետների, ոչ Հայաստանում, ոչ Ադրբեջանում հանրությունը հրամանով չի ընդունի ԼՂ հարցում զիջումները*

Այսօր Մոսկվայում տեղի կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ քննարկելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հերթական հարցերը: Այդ հանդիպման հնարավոր ելքի առնչությամբ կանխատեսումներին էին անդրադառնալու «Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում երեկ տեղի ունեցած Երեւան-Մոսկվա տեսակամրջի մասնակիցները:

Կանխատեսումը, թե հնարավո՞ր է արդյոք առաջընթաց Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանը Մոսկվայում՝ ՌԴ նախագահի մրցանակով ձիարշավի միջազգային ոչ պաշտոնական միջոցառման ընթացքում, Մոսկվայի պետական համալսարանին առընթեր Հետխորհրդային տարածքում հասարակական-քաղաքական գործընթացների ուսումնասիրման տեղեկատվական-վերլուծական կենտրոնի գլխավոր տնօրեն **Ալեքսեյ Վլասովը** անշնորհակալ գործ է համարում:

Ըստ նրա, այս խնդրի լուծման առումով երկու հարց կարելի է առանձնացնել. որքանով են ԵՄ-ն եւ ԱՄՆ-ը պատրաստ լուծելու հարցը առանց երկակիության կիրառելու եւ որքանով են հասարակությունները Հայաստանում եւ Ադրբեջանում պատրաստ ընդունելու անխուսափելի զիջումները:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունից Ազգային ժողովի պատգամավոր **Հերմինե Նաղդալյանը** գտնում է, որ մոտակա հանդիպումն ընդամենը մի քայլ է դեպի լուծումը, քանի որ մինչ լուծումը դեռ շատ բան կա անելու: Իսկ հրապարակված դրույթներից մադրիդյան սկզբունքների առնչությամբ Նաղդալյանին հետաքրքիր էր լսել Ադրբեջանի մոտեցումները, հատկապես որ խաղաղության մասին խոսակցություններն անընդհատ ընդմիջվում են Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններով:

ԱՊՀ երկրների ինստիտուտի փոխտնօրեն **Վլադիմիր Ժարիխինը** կարծում է, որ ԼՂ հակամարտության կարգավորման բանալիները Երեւանում եւ Բաքվում են եւ անիմաստ են այլ մայրաքաղաքներում որոնումները: Փորձագետի կարծիքով, հակամարտության կարգավորման նախադրյալը խաղաղ լուծումն է, կողմերը պետք է պատրաստ լինեն նաեւ, որ երկու երկրներում հասարակությունը հրամանով չի ընդունելու զիջումները:

Հայ հեղափոխական դաշնակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանն** իրեն լավատեսների շարքը չդասեց, ընդգծելով, որ նախագահական մակարդակով հանդիպումներին Ալիեւի ռազմատենչ հայտարարությունների նախորդումը չի կարող հոռետես չդարձնել: Խոսելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների վերջին հայտարարության մասին՝ Հովհաննիսյանը նշեց, որ այն ոգեւորություն չի առաջացնում, քանի որ 90 տոկոսով անդրադառնում է հակամարտության դա-




ստրացմի հետեւանքներից, ինչի մասին հաճախ նշում է Ադրբեջանը:

Դաշնակցության խորհրդարանական խմբակցության ղեկավարի խոսքերով, նշված հայտարարության մեջ անհստակություն է միայն, կամ անգամ վտանգավոր դրույթներ, չկան կարեւոր հարցերին տրվելիք մոտեցումներ:

Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի Կովկասյան հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն **Վլադիմիր Զախարովը** անիմաստ է համարում խոսել առաջիկա հանդիպումից, միայն լավ կլինի, եթե դատարկ չլինի: Ըստ Զախարովի, ԼՂ ներկայացուցիչներն արդեն իսկ պետք է մասնակցեն բանակցություններին, քանի որ դա անհրաժեշտություն է:

Մադրիդյան սկզբունքների առումով Զախարովը գտնում է, որ դրանք տարբեր ժամանակներ ու տարբեր կերպ ներկայացվել են, ու այս անգամ էլ հնարավոր չէ ասել, թե արդյոք դրանք հենց քննարկվող սկզբունքնե՞րն են: Մյուս կողմից էլ, բանակցող կողմերը խնդրահարույց վիճակներ են ստեղծում: Մասնավորապես, մայնդորֆյան հռչակագրով ամրագրվում է ուժի չկիրառման մոտեցում, սակայն այս տարեսկզբից Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Նոր տարվա շնորհավորական ուղերձում իսկ խոսում է հակամարտության ռազմական լուծման հավանականության մասին, ասելով, թե ուժով կվերադարձնեն Ղարաբաղը:

Կովկասի ինստիտուտի տնօրեն **Ալեքսանդր Իսկանդարյանը** համամիտ է, որ հակամարտության լուծման բանալիները տարածաշրջանում են: Փորձագետը կարեւորում է տվյալ պահին տարածաշրջանում հասարակական կոնսենսուսի առկայությունը: Մասնավորապես, Ադրբեջանի պարագայում, ըստ Իսկանդարյանի, հասարակական կոնսենսուսն ասում է, թե յուրաքանչյուր որոշում պիտի բացառի ԼՂ անկախությունը:

Լեռնային Ղարաբաղում հասարակական կոնսենսուսը ավելի շատ խոսում է «ոչ մի թիզ հող» տրամաբանությամբ, ընդ որում, ԼՂ-ում չեն հավատում ոչ Ադրբեջանի, ոչ էլ միջազգային հանրության տրամադրելիք երաշխիքներին: Հայաստանում այդ կոնսենսուսը կառուցվում է այն մոտեցմամբ, որ առանց Ղարաբաղի մասնակցության հարցը հնարավոր չէ լուծել:

Ինչ վերաբերում է մադրիդյան սկզբունքների մասով վերջին հայտարարությանը, ապա դրանցում, ըստ Իսկանդարյանի, ոչ մի նորություն չկա:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Մարտյան դեպքերի ժամանակ հատուկ միջոցներ կիրառած ոստիկանների նկատմամբ հարուցվել է քրեական գործ

2008 թվականի մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած զանգվածային անկարգությունները կանխելուն ուղղված միջոցառումների ժամանակ հատուկ միջոցներ կիրառած ոստիկանների նկատմամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ:

Ըստ Panorama.am-ի, այս տեղեկությունը հաստատել է ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղարը՝ նշելով, որ նախաքննության օրինականության հսկողություն իրականացնող Կ. Փիլոյանը գրավոր ցուցում է տվել նախաքննական մարմնին՝ քրեական գործ հարուցել «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցներ կիրառած ոստիկանների նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի հատկանիշներով (զենքի, ռազմամթերքի եւ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը):

Նույն աղբյուրի հավաստմամբ, մեկ այլ քրեական գործ էլ հարուցվել է ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի ուղարկած նյութերի հիման վրա:

Հանձնաժողովից ստացվել են տեսագրություններ 2008 թվականի մարտի 1-2-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ: Ստացված տեսագրություններում կան կադրեր, թե ինչպես են վահաններով եւ մահակներով զինված ոստիկանության աշխատակիցները վազում քաղաքացիական հագուստով անձանց հետեւից եւ մահակներով հարվածում անհայտ քաղաքացուն: Նկատի ունենալով, որ նշված կադրերում առկա են ոստիկանների պաշտոնական լիազորություններից ակնհայտորեն դուրս եկող գործողություններ՝ Կ. Փիլոյանը հանձնարարել է հարուցել քրեական գործ եւ ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցառումները քրեական գործի նախաքննության օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու, բոլոր հանգամանքները պարզելու եւ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու:

**Ն. Մ.**

ՀԱՄԱՌՈՏ

## Գեոդեզիական համակարգը հասանելի կլինի բոլորին

Կառավարության ընդունած որոշումը գեոդեզիական WGS 84 համակարգը բոլորին հասանելի դարձնելու մասին երեկ լրագրողներին ներկայացրեց անշարժ գույքի կադաստրի կոմիտեի փոխնախագահ **Աշոտ Մուսայանը**: Նա հայտնեց, որ բացառությամբ գաղտնիության մի շերտի, որից կարող են օգտվել միայն պաշտպանական նպատակներով, համակարգը հասանելի է բոլորի համար:

## Հուլիսի 18-ին կաշխատենք հուլիսի 20-ի փոխարեն

Կառավարության նախկինում ընդունած որոշման համաձայն, հուլիսի 18-ը՝ շաբաթ օրը, աշխատանքային օր կլինի, իսկ 20-ը՝ երկուշաբթին, ոչ աշխատանքային օր: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայ առաքելական եկեղեցին հուլիսի 20-ին նշում է «Մեռելոցը»:

**Ա. Ս.**

# Ղարաբաղյան բանակցային գործընթացի մի քանի երեսը

*1-ին էջից*

**Մեր վերեւները շարունակում են պնդել հայկական կողմի համար միշտ բարձրաձայնված հայեցակետը՝ Ղարաբաղը չի կարող ունենալ այսօրվա կարգավիճակից ցածր կարգավիճակ, Հայաստանի հետ ընդհանուր սահման պետք է ունենա, ԼՂ ժողովրդին կյանքի իրական անվտանգության երաշխիք պետք է լինի, դրանք պետք է տեսանելի լինեն հակամարտության կարգավորման փաստաթղթում:**

**Հայաստանի իշխանական շրջանակները շարունակում են նույն ոգով ասել ՀՅԴ-ի եւ արմատական ընդդիմության ասածին հակառակ թեզ՝ որ մադրիդյան սկզբունքներով եւ եռանախագահների հայտարարությամբ միջազգային հանրությունը ընդունում է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ու այն հանգամանքը, որ ԼՂ-ն ազատ կամարտահայտությամբ ինքնորոշվելու իր իրավունքը կարող է իրացնել, եւ անգամ դա փայլուն ձեռքբերում է, ինչը Ադրբեջանի՝ կարգավորումից խուսափելու պարագայում ԼՂ եւ ՀՀ իշխանություններին թույլ է տալու հասնել ԼՂ անկախության ճանաչմանը: Ընդ որում՝ վերին օղակներում չեն գլանում հիշեցնել, որ առանցքային որոշումներ կայացնելուց առաջ ձեւ կգտնվի հասարակական կարծիքի մասին պատկերացում ունենալու եւ դրանով առաջնորդվելու համար:**

**Բայց եթե այդպես է՝ ինչո՞ւ այս նշմարները չի տեսնում երեկ իշխանություն, այսօր ընդդիմություն ՀՅԴ-ն:**

**Ինչպե՞ս է, որ Արցախի քաղաքական միավորները եւս չեն ընկալում այդ նշմարները: Արցախն, իրոք, շատ զգայուն անոթ է այս դեպքում, քանի խնդիրներն անմիջականորեն իրեն են վերաբերում, եւ երեկ, հանդես գալով քաղաքական հայտարարությամբ, պնդել են, որ ներկա փուլում ծախողման են դատապարտվել ղարաբաղյան հակամարտության կարգավորման ջանքերը, եւ պահանջում են ԼՂՀ-ի լիիրավ մասնակցություն հակամարտության կարգավորման գործընթացին, չխաթարել ԼՂՀ ժողովրդի անվտանգությունը, որի հիմնական երաշխիքը ԼՂՀ անկախ պետականությունն է եւ ԼՂՀ սահմանադրությամբ ամրագրված տարածքային ամբողջականությունը: Այս պահանջների չիրականանալը, ըստ ղարաբաղցիների, խախտելու է տարածաշրջանային հավասարակշռությունը, որի հետեւանքով ապագա ոչ ցանկալի զարգացումների ողջ պատասխանատվությունն ընկնում է միջազգային հանրության եւ հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարության վրա: Սա՝ որպես զորակցություն ԼՂՀ ԱԳՆ հուլիսի 15-ի հայտարարությանը, եւ որպես միասնականության ու վճռականության կոչ Արցախի բնակչությանը:**

**Դե հիմա արի ու հասկացիր՝ ով ում բարեկամն է, իսկ ավելի կարեւորը՝ ո՞վ է, որ չի ուզում հայանպաստ լուծում, կամ չի կարողանում ապահովել այդպիսի բանակցային ընթացք: Ստացվում է, որ առայժմ՝ Նալբանդյանը: Թե Նալբանդյանի հրաժարական են ուզում այն պատճառով, որ հարցի կարգավորման մեջ ներքաշված քաղաքական պետություններում հասկանան՝ հայերս լուրջ ենք, զիջում չենք անելու՝ էլի ոչինչ: Նալբանդյանն էլ կդիմանա դրան, կամ որ՝ երկրի արտաքին քաղաքականության հիմնական պատասխանատու երկրի նախագահին հասկացնեն, թե հաջորդը ի՞ր հրաժարականն են պահանջելու: Գուցե այս վերջինը, որովհետեւ Ա. Ռուստամյանը երեկ ասաց. «Նախագահն, այո, դեռ հնարավորություն ունի իրավիճակի մեջ կտրուկ բեկում մտցնելու, եւ ամենակարեւորը՝ չստորագրելու այն փաստաթուղթը, որն այսօր առաջարկվում է», նկատեց ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչն՝ ավելացնելով, որ այդ փաստաթուղթը անտեսում է ԼՂ ժողովրդի արդեն իսկ արտահայտված կամքը:**

**Ու մնում է, որ գրագետ ժողովուրդը մի միասնական, հիմնավորված մոտեցում տեսնի ու կողմնորոշվի՝ ինչպես պահել իրեն: Թե չէ իշխանությունն իրենն է ասում, ՀՅԴ-ն՝ իրենը, լեւոնականները՝ թե հենց մենք գանք, Ղարաբաղը չենք տալու, ու այս բոլորի անունը քիչ էլ անցնի, կարող է լինել՝ «Ղարաբաղը ներքաղաքական ռազբորկաների նյութ»:**

**Եթե վտանգ կա խնդրում՝ իշխանությունն էլ չպետք է ձեւեր թափի, այլ՝ մատչելի բացատրի իր ժողովրդին: Չէինք ուզենա այդպիսի կենսական նշանակության եւ տարբեր վտանգներ ու որոգայթներ ունեցող հարցի ճակատագիրը որոշվի հանրահավաքային էյֆորիայի մակարդակով, կամ հասարակության գիտակից մասը ողջ օրը կայքերում որոնի իրեն հուզող հարցերի պատասխանը՝ ադրբեջանականից ռազմատենչ հայտարարություններ պեղելով, հայկականից՝ մտահոգություններ այդ առթիվ:**

**ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/16/2009 10:09 PM Page 1



# ՀՅԴ-ն վաղաժամ է համարում նախագահի հրաժարականի պահանջը



«Հայաստանի եւ Արցախի շուրջ այսօր կատարվող իրադարձությունները չափազանց վտանգավոր միտումներ են բովանդակում մեր ազգային-պետական շահերի տեսանկյունից: Հետզհետե մեծանում է Ադրբեջանի քաղաքական, տնտեսական կշիռը, Թուրքիան ու Ադրբեջանը միջազգային ասպարեզում միասնաբար փորձում են թուլացնել Հայաստանի դիրքերը, նպատակ ունենալով տարածաշրջանն իրենց ազդեցության գոտի դարձնել: Այս իրավիճակում միակ ելքը մեր համախմբվածությունն է, հատվածական շահերից վեր կանգնելը եւ մեր արժանապատվությունն ու իրավունքները պաշտպանելը:

Կրկին արձանագրում ենք, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը շեղվել է ազգային անվտանգության ռազմավարության եւ ռազմական դոկտրինի հիմնարար դրույթներից: Իբրեւ հետեւանք չի գործնականացվում Հայաստանի Հանրապետության ԼՂՀ ժողովրդի անվտանգության եւ նրա ընտրած զարգացման ուղու երաշխավորն ու աջակիցը լինելու առանցքային դրույթը, շարունակում է խոչընդոտվել ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, չկա համարժեք պայքար թուրք-ադրբեջանական տանդեմի հետեւողական հակահայկական գործողությունների դեմ, ներքին ու արտաքին քարոզչության մեջ ՀՀ արտգործնախարարության գործունեությունը մնում է խիստ անբավարար:

Այսօր մենք ուղղակի պարտավոր ենք վերաիմաստավորել եւ վերանայման ենթարկել Հայաստանի արտաքին քաղաքականությունը եւ նոր էջ բացել: Դեռեւս կա այդ հնարավորությունը:

Արտաքին քաղաքականության ասպարեզում առաջացած բացասական հետեւանքները վերացնելու եւ ազգային-պետական ուղեգիծը վերականգնելու նպատակով պահանջում ենք ոլորտի անմիջական պատասխանատու ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի հրաժարականը»:

Երեկ «Ուրբաթ» ակումբում նման հայտարարությամբ հանդես եկավ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանը**:

Ինչո՞ւ է Դաշնակցությունը արտաքին քաղաքականությունից դժգոհելով պահանջում ոչ թե դա ղեկավարող Սերժ Սարգսյանի, այլ նրա նշանակած արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրաժարականը: Լրագրողներն այսպիսի հարց ուղղեցին Արմեն Ռուստամյանին:

«Նախ, որովհետեւ մենք չենք ուզում խափանել աշխատանքներն ընդհանրապես, այլ մեր նպատակը բխում է իրավիճակի մեջ կտրուկ փոփոխություն մտցնելու անհրաժեշտությունից: Եվ մենք նաեւ սրանով հնարավորություն ենք ուզում տալ նախագահին, որպեսզի նա այդ փոփոխություններն իրականացնի: Նախագահը, այո, դեռ ունի հնարավորություն իրավիճակի մեջ կտրուկ բեկում մտցնելու, եւ ամենակարեւորը, չստորագրելու այն փաստաթուղթը, որն այսօր առաջարկվում է: Մեր խորին համոզմամբ, դա անտեսում է ԼՂ ժողովրդի արդեն իսկ արտահայտված կամքը: Եվ ուստի, այսօր, այս պահին, իրավիճակի մեջ փոփոխություն մտցնելու համար, որպես առաջին քայլ, այն գտնում ենք նպատակահարմար եւ ճիշտ: Բնականաբար մենք հետեւելու ենք, որ այդ փաստաթուղթը չստորագրվի: Եթե, Աստված մի արասցե, ստորագրվեց, ապա մեր հաստատումներն արդեն կփոխեն նաեւ իրենց բնույթը, մեր պայքարը կստանա այլ բնույթ եւ եղանակ», ասում է Արմեն Ռուստամյանը:

Իսկ ի՞նչ են անելու, եթե իրավիճակն այդուհանդերձ չփոխվի, հետաքրքրվեցին լրագրողները:

«Եթե այդ տրամաբանությամբ, բնականաբար ինչ-որ համաձայնագիր ստորագրվի, որեւէ փաստաթուղթ ստորագրվի, մենք միշտ ասել ենք եւ հիմա էլ ասում ենք, դա այն հարցն է, որում Դաշնակցությունը երկփեղկված կամ երկատված վիճակով չի հանդես եկել եւ նման դեպքերում միշտ սկզբունքային դիրքորոշում է հանդես բերել: Բազմիցս ասել ենք, ով էլ լինի օրվա գործող նախագահը, մենք նման քաղաքականությանը դեմ ենք լինելու, եւ դեմ ենք լինելու բոլոր հնարավոր միջոցներով: Բոլոր հնարավոր միջոցները, ես նկատի ունեմ քաղաքական պայքարի բոլոր միջոցները: Եվ այդ ուղղությամբ մենք արդեն իսկ նախապատրաստական աշխատանքներ սկսել ենք», ասում է Արմեն Ռուստամյանը:

Նա նաեւ նշեց, որ աշխարհում ընթացող գործընթացներում շատ հաճախ հենց անմիջական պատասխանատուների հրաժարականից է սկսվում վերանայման գործընթացը, այդպիսի օրինակներից է Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանի հրաժարականը:

Կուսակցության անհանգստության պատճառը Արմեն Ռուստամյանը բացատրեց նրանով, թե վաղուց չէր եղել նախադեպ, որ 3 համանախագահող երկրների նախագահները միասին հանդես գային: Ռուստամյանը նկատում է, որ միջազգային ասպարեզում ճնշումը շատ մեծ է, իսկ այդ ճնշման տակ այսօր գտնվում է ՀՀ նախագահը: Եվ հասկանալով այդ ճնշման լրջությունը, Դաշնակցությունը չի ուզում, որ նախագահը ձախողվի այդ բանակցություններում. «Ձախողումը լինելու է բոլորիս համար, եւ մենք մեծ դժվարություն ենք ունենալու հետագայում շտկելու այդ իրավիճակը»:

Արմեն Ռուստամյանին հարց տվեցին լրագրողները, թե արդյոք պատրա՞ստ են իրավիճակը փոխելու համար գործակցել Հայ ազգային կոնգրեսի հետ: Ըստ Ռուստամյանի՝ այդ հարցը նույնն է, որ հարցնեն, թե երբ Ադրբեջանը պատերազմ սկսի, իրենք նույն խրամատի մեջ կկռվե՞ն կոնգրեսի համակիրների հետ: «Իհարկե, կլինենք նույն խրամատում», ասում է ՀՅԴ ներկայացուցիչը:

**Ն. Ս.**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Իրավապաշտպանները դրական տպավորություն են ստացել

**Օրերս ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի հրավերով Արցախում էին Օմբուդսմենի եվրոպական ինստիտուտի գործադիր տնօրեն Նիկոլաուս Շվարցլերը, Ռուսաստանի Դաշնության մարդու իրավունքների նախկին լիազոր, Ռուսաստանի խաղաղության ազգային խորհրդի փոխնախագահ Օլեգ Միրոնովը եւ Ռուսական քաղաքագիտության ասոցիացիայի նախագահ, Համընդհանուր խաղաղության ֆեդերացիայի գլխավոր քարտուղարի օգնական Վլադիմիր Պետրովսկին:**

**Այցի նպատակը ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության եւ մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով զբաղվող եվրոպական տարբեր հաստատությունների ու կազմակերպությունների հետ կապերի հաստատումն էր:**

**«Ազգի» թղթակցի հետ զրույցում ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Յուրի Հայրապետյանը նշեց, որ արդեն մեկ տարուց ավելի իրենք բանակցություններ են վարում այդ կազմակերպությանն անդամագրվելու նպատակով: Ինչպես տեղեկացրեց Յու. Հայրապետյանը, Օմբուդսմենի եվրոպական ինստիտուտը հանրօգուտ միություն է, որի խնդիրներից են մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գիտական հետազոտությունների անցկացումը, քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը, օմբուդսմենի գաղափարների տարածումը, սատարումն ու գիտական մակարդակով օժանդակումը: Այս ինստիտուտը հիմնադրվել է 1988 թվականին՝ Ավստրիայի Ինսբրուկ քաղաքում: Այսօր եվրոպական գրեթե բոլոր երկրների օմբուդսմենները հիշյալ կառույցի անդամներ են:**

**«Ազգի» այն հարցին, թե ո՞րն էր պատվիրակության այցի նպատակը, Յուրի Հայրապետյանն ասաց, որ նրանք խնդիր էին դրել ծանոթանալ Արցախի ՄԻՊ հաստատության աշխատանքներին եւ ուսումնասիրել այդ կառույցի զարգացման հեռանկարները:**

**Պատվիրակությանն ընդունել են ԼՂՀ նախագահը եւ Ազգային ժողովի նախագահը: Միաժամանակ, Նիկոլաուս Շվարցլերը, Օլեգ Միրոնովն ու Վլադիմիր Պետրովսկին ելույթ են ունեցել խորհրդարանի պատգամավորների, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, դատարանների, դատախազության, ոստիկանության համակարգերի, արդարադատության եւ արտաքին գործերի նախարարության աշխատակիցների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առջեւ:**

**Ն. Շվարցլերը անդրադարձել է մարդկային գոյատեւման անվտանգության ստանդարտների հիմնախնդիրներին, Օ. Միրոնովը՝ մարդու իրավունքների պաշտպանության ռուսական փորձին, իսկ Վ. Պետրովսկին ներկայացրել է Հարավային Կովկասի կոնֆլիկտների կարգավորման իր տեսակետը:**

**Յուրի Հայրապետյանի խոսքով, պատվիրակության անդամները դրական կարծիք են կազմել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության եւ առհասարակ Ղարաբաղի մասին: Նրանք գնահատել են նման մարմնի ստեղծումը հատկապես ռազմական դրության պայմաններում, որը շատ երկրներում հիմք է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումներ մտցնելու համար: Պատվիրակության անդամներին գոհացրել է, որ մարդու իրավունքների ինստիտուտի մասին ԼՂՀ սահմանադրության մեջ առանձին գլուխ է հատկացված: Ն. Շվարցլերն, օրինակ, իր ելույթում կարեւորել է, որ մեկ տարվա ընթացքում ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը վերցրել է այն առավելագույն դրական փորձը, որը կուտակվել է եվրոպական տարբեր երկրների օմբուդսմանի ինստիտուտների գործունեության ընթացքում:**

**Յուրի Հայրապետյանը նաեւ հույս հայտնեց, որ ինչպես խոստացել է Նիկոլաուս Շվարցլերը, վերջինս իր դրական կարծիքը կհասցնի Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի գործադիր վարչության անդամներին, որոնք պետք է քվեարկության դնեն այդ ինստիտուտին ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի անդամակցելու հարցը:**

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «Սարգսյան-Ալիեւ հանդիպմանը որեւէ փաստաթուղթ չի ստորագրվի»



**«Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում պարբերաբար լինում են ակտիվացումներ: Հերթական՝ այս ակտիվացումը, կարծես բավական լուրջ է», տեսակետ հայտնեց քաղաքագետ Ստեփան Գրիգորյանը:**

**Անդրադառնալով մադրիդյան սկզբունքները ներառող փաստաթղթին, Գրիգորյանը կարծիք հայտնեց, որ այնտեղ կան և՛ սկզբունքներ, և՛ կարեւորագույն քայլեր: «Սկզբունքներն են՝ տարածքային ամբողջականությունը, ինքնորոշումը, խաղաղ ճանապարհով վեճերը լուծելը»: Լրացված սկզբունքներում կան մի քանի նորություններ, որոնք, ըստ քաղաքագետի, պետք է մանրամասն ուսումնասիրվեն: Իսկ մինչ այդ Գրիգորյանը գործընթացում դրական կողմ էլ է նկատում՝ վերականգնվել է բանակցային գործընթացը: «Դրական է, որովհետեւ բանակցային գործընթացի խափանումը լարվածություն է բերում և՛ տարածաշրջանում, և՛ Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում»: Քաղաքագետը փաստում է, որ մադրիդյան սկզբունքներում ներառված Ադրբեջանին վերաբերող կետերը բավական հստակ են, ի տարբերություն Հայաստանին եւ ԼՂՀ-ին վերաբերող կետերի: «Այդ կետերը պետք է ճշտվեն, այսինքն՝ պահանջենք մեր շահերից բխող կետերի կոնկրետացում»:**

**Երեք օր առաջ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի արած հայտարարությունը, որ Կիպրոսի հարցը պետք է լուծի Կիպրոսի ժողովուրդը, քաղաքագետը որակում է դրական եւ հայանպաստ քայլ: Ըստ նրա, թուրք քաղաքական գործչի հայտարարությունից կարելի է եզրակացնել, որ Հյուսիսային Կիպրոսի ժողովուրդը պետք է հանրաքվեի միջոցով որոշի իր ապագան:**

**«Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների մոսկովյան հանդիպման ժամանակ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվի», վստահեցրեց քաղաքագետը: Գրիգորյանը համոզված է, որ այդպիսի բան նախատեսված չէ: Ըստ նրա՝ նախագահների հանդիպման ընթացքում ճշտվելու են բանակցային գործընթացի տարբեր հարցեր:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Թուրքիան նախապատրաստվում է Հայաստանի հետ ֆուտբոլային հանդիպմանը

*1-ին էջից*

Քարոզարշավի կազմակերպիչները, ինչպես հուլիսի 14-ի համարում նշել է «Հյուրիեթը», հավաքել եւ Թուրքիայի ազգային մեծ ժողովին են ներկայացրել Հայաստանի հետ ֆուտբոլային հանդիպումը Կեսարիայում անցկացնելու դեմ 250 հազար ստորագրություն: Եթե հանդիպումը տեղափոխվի մեկ այլ քաղաք, ապա մարզադաշտի բացումը նախատեսվում է կատարել սեպտեմբերի 5-ին Թուրքիա-Էստոնիա հանդիպումով:

Թուրքական թերթի վկայությամբ, Կեսարիայի քաղաքապետ Մեհմեդ Օզհասեքին դրա առնչությամբ ասել է, որ իրենք որպես տանտեր տեսել են Թուրքիա-Հայաստան հանդիպումը պատշաճ մակարդակով անցկացնելու համար անհրաժեշտ բոլոր նախապատրաստությունները, ապա եւ ավելացրել. «Այս հանդիպման անցկացումը Կեսարիայում մեծ նպաստ կբերի մեր քաղաքի ճանաչողությանը: Մեր հյուրերին, անատոլիական հյուրասիրությանը համապատասխան, կընդունենք ինչպես հարկն է: Սակայն հանդիպման անցկացման վայրի մասին վերջնական որոշումը մեր համաքաղաքացի պատվարժան նախագահին ու արտգործնախարարությանն են կայացնելու»:

Կեսարիայում քաղաքապետի հայտարարությանը հետեւել է քաղաքի ֆուտբոլասերների միության հուլիսի 15-ի հաղորդագրությունը, որտեղ «Սոնհաբերլեր» կայքէջի վկայությամբ, նշվել է, որ Էստոնիայի եւ Հայաստանի հետ նախատեսվող ֆուտբոլային հանդիպումները նպաստելու են աշխարհում ինչպես Կեսարիայի, այնպես էլ Թուրքիայի ճանաչողությանը:

Այդ ընթացքում Կեսարիայի ֆուտբոլասերների միության նախագահ Հասան Յալըդզըլըն հայտարարել է. «Մենք աջակցում ենք Հայաստանի հետ հանդիպման առնչությամբ Կեսարիա ժամանող հյուրերին, կեսարացիների տներում հյուրընկալելու որոշ կազմակերպությունների առաջարկը: Ռամազանի տոներին համընկնող այս հանդիպումը մեր հյուրերին ազգային ավանդույթներին եւ թուրքական հյուրասիրությանը ծանոթացնելու պատեհ առիթ է: Հայաստանի հետ ֆուտբոլային հանդիպման պատճառով աշխարհի աչքը մեր վրա է լինելու: Համոզված ենք, որ և՛ Կեսարիան, և՛ Թուրքիան այս քննությունից պարզերես դուրս կգան: Միության բոլոր անդամները կազմուպատրաստ հանդիպմանն են սպասում»:

Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային պատասխան հանդիպումը կանցկացվի՞ Աբդուլլահ Գյուլի ծննդավայր Կեսարիայում, կամ Սերժ Սարգսյանը ի՞նչ արձագանք կտա հրավերին, դժվար է ասել: Բայց որ Թուրքիան պատասխան հանդիպմանը լրջորեն պատրաստվում է, իսկ դրա թերեւս գլխավոր առանձնահատկությունը ՀՀ նախագահին փոխադարձաբար Թուրքիա հրավիրելու առիթն է, կասկած չի հարուցում:

ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ

# Փոքրիկ



Ծովի ալեկոծությունը հինգ-վեց բալ է: Քամու արագությունը հիմա, երբ գրում եմ այս տողերը, վայրկյանում մոտ տասը մետր է: Սա դասական փոքրիկ չէ: 5 օր եւ 5 գիշեր նման պայմաններում մեր միակայմ առագաստանավը շարունակում է շարժվել դեպի հարավ-արեւմուտք: Ուտելիք պատրաստելն անհնար է: Առանց ճոճի ոչ մի վայրկյան չկա: Այս վիճակը հանգեցնում է նրան, հերթապահը ղեկը թողնելուց հետո վազում է նավախցիկ, որտեղ քնի եւ 4 ժամ հետո կրկին հերթապահի: Խոհարարը պարտավոր է ինչ-որ բան պատրաստել: Լավ է, որ գոնե ունենք բաստուրմա, սուջուխ, շոգեխաշած միս եւ կիլկա:

Նավապետը երբեք հերթապահություն չի անում, բայց միշտ հերթապահության մեջ է: Նավապետը եւ էլեկտրիկը գանգատվում են, որ իմ լույսը միշտ վառված է: Բայց, ինչպես ասում էին երկու ուրախ դասականներ, «գրողը պետք է գրի»: Միայն թե գրելը կամ մեքենագրելը ճոճքի պայմաններում անչափ դժվար է:

Թե՛ Բալթիկ ծովում զինվորական ծառայությանս տարիներին, թե՛ «Կիլիկիայի» վրա եւ թե՛ հիմա ինձ շատ հետաքրքրել եւ հետաքրքրում է փոքրիկի պահին յուրաքանչյուր առանձին ալիքի ձեւավորման ընթացքը: Նախ ուզում էի իմանալ, թե ինչ է ասում օվկիանոսագիտությունը ծովի եւ օվկիանոսի ալիքների չափերի մասին:

Ալիքները բնորոշված են երեք գործոններով՝ քամու արագությամբ, ջրի մակերեւույթի վրա դրա ազդեցության տեւողությամբ եւ քամուն ենթակա ջրավազանի մակերեւույթի երկարությամբ: Բնականաբար, օվկիանոսն անծայրածիր է: Ես արդեն սովորել եմ չափել ալիքների լայնությունը եւ ամենագլխավորը՝ դրանց բարձրությունը: Ինտերնետում՝ Հայաստանի վինդսերֆինգի եւ կայտսերֆինգի ընկերակցության կայքէջում բոլոր տվյալները կան ալիքների եւ քամու մասին:

Գոյացած մի ալիքին հաջորդում է մեկ ուրիշ՝ ավելի մեծ ալիք: Օվկիանոսի եւ քո միջեւ, ալիքների եւ առագաստանավի միջեւ չկա որեւէ պայքար, կա միայն նավարկություն: Մեր երթուղու երկարությունը 60 հազար կիլոմետր է՝ մեկուկես հասարակած: Այդ ճանապարհին կլինեն և՛ անհաջողություն, և՛ փոքրիկ՝ բազմահարկ շենքի բարձրության ալիքներով, և՛ մրրիկ, երբ ջրի մակերեւույթը ծածկված է թանձր փրփուրով եւ հորիզոնական տեսանելիությունն աննշան է:

Բայց գիտեմ, երբեք չի լինի Իններորդ ալիք: Վստահ եմ՝ մեծն Հովհաննես Այվազովսկին երբեք չի տեսել այդ Իններորդ ալիքը: Նման գերհրաշք չէր կարող լինել ամբողջ համաշխարհային օվկիանոսում: Իններորդ ալիք կարող էր ծնվել միայն մեծ ծովանկարչի հոգում ու սրտում: Նա նկարել է ոչ թե ալիք, այլ բնության ոգու եւ ինքնահաղթահարման մեջ գտնվող մարդու հոգու միաձուլումը: Իններորդ ալիք չի կարող լինել ծովերում եւ օվկիանոսներում, չի եղել մինչեւ 1850 թվականը, երբ Այվազովսկին սկսեց կերտել այն, իր մեջ զգալով աստվածային ներշնչանքը: «Իններորդ ալիքը» Սանկտ Պետերբուրգի ռուսական թանգարանում է, իսկ օվկիանոսում մենք տեսնում ենք փոքրիկ առաջացնող սովորական, պարզապես գեղեցիկ ալիքներ:

Մենք չպետք է նեղանանք արգախյան Վարարակն աղբյուրի ջրի պես կենարար փոքրկից: Ուրիշներն են ասել, որ առանց փոքրկի վեհաշուք օվկիանոսները կվերածվեն խղճուկ ճահիճների: Այնպես որ փոքրիկը բուն կյանքն է, որը, ինչպես հայտնի է, ոչինչ չի շնորհում առանց ծանր աշխատանքի եւ հույզերի:

Իսկ մեր մոտակա նպատակն է ոչ միայն հասնել Բարբադոս եւ Բրիջթաունի ծովախորշ, այլեւ Ատլանտյան օվկիանոսի վերջնագծին: Եվ այդ հարցում, հուսով եմ, «Արմենիային» կօգնի նաեւ փոքրիկը:

# Ոչ միայն գիտարշավ, այլեւ սպորտ



Զարմանալի է, մեր անցածից դեռ տասնապատիկ շատ ճանապարհ ունենք անցնելու, բայց տպավորությունն այնպիսին է, թե արդեն մոտենում ենք վերջնագծին: Կարծես թե ես կռահում եմ այդ տարօրինակ զգացողության գաղտնիքը: Դա Ատլանտյան օվկիանոսի հեղինակությունն է. անցյալում այն համարվել է յուրօրինակ Կոլիզեում, ուր գլադիատորները ելնում էին մահացու մենամարտի, ողջունելով Նեպտունին:

Մենք բնավ գլադիատորներ չենք, այլ՝ մեր նախնիների հետքերով օվկիանոսը հաղթահարող նավագնացներ: Պատմական հիշողության զարգացումը մեծ զգացում է: Իսկ բուն շուրջերկրյա ճանապարհորդությունը ներառում է ոչ միայն գիտարշավային, այլեւ զուտ մարզական կողմեր:

Այս կապակցությամբ անկարելի է չասել, որ Ատլանտյան օվկիանոսը հատելու առաջին փորձերը կրել են զուտ մարզական, ռոմանտիկ բնույթ (սպորտը նաեւ ռոմանտիկա է): Եվ կարծում եմ՝ տրամաբանական կլինի, եթե այսօր վերհիշենք այն առաջիններին, ում սիրում են Աստված եւ նորին մեծություն Պատմությունը:

Խոսքը, կրկնում եմ, ոչ թե մեծ ծովագնացների ու նավագնացների մասին է, այլ առագաստանավային սպորտի նախակարապետների մասին: Պետք է հիշել, որ պատմությունը հենվում է միայն փաստերի վրա, մանավանդ երբ խոսքը Առաջինին բացահայտելու մասին է: Մարզիկ կարելի է համարել հոլանդացի վիրաբույժ Հենրի դե Վոգգին, որը 1601 թ. ապրիլի 19-ին կառավարությունից գրավոր թույլտվություն ստացավ նավարկելու Ֆիլսսինգենից (Հոլանդիա) մինչեւ Լոնդոն: Աշխարհի առաջին առագաստանավորդ-մարզիկ-ճանապարհորդն իր խնդրագրում պաշտոնյաներին բացատրել էր, որ «առագաստի ներքո կնավարկի միանգամայն ինքնուրույն, հույսը դնելով միայն նախախնամության վրա»: Պատմագրության բոլոր կանոնների համաձայն, հոլանդացի բժիշկը «հանուն հաճույքի» (սպորտը նաեւ հաճույք է) նավարկության դուրս եկած առաջին առագաստանավորդն էր, եւ նրա մասին բավական շատ է գրվել: Առագաստանավային սպորտի նավագնացի ցուցանիշը այն ժամանակվա համար տպավորիչ էր՝ 130 մղոն Հյուսիսային ծովով եւ Լա Մանշով: Ըստ որում համարվում էր, որ 100 մղոնը նա անցել է բաց ծովով:

Մարզական առագաստանավերը սկսեցին կոչվել զբոսանավեր: Բայց առագաստանավորդների մեծ երազանքը մնում էր Ատլանտյան օվկիանոսի հատումը: Պատմաբանները երկար որոնել են օվկիանոսը միայնակ հատած մարդու անունը: Արդեն այն ժամանակ մարդիկ գիտեին, որ Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասում գերակշռում են արեւելյան քամիներն ու ջրային հոսանքները: Եվ օվկիանոսը հյուսիսում հատած առաջին մարդը ձկնորս Ալֆրեդ Ենսենն էր: ԱՄՆ-ի անկախության 100-ամյակի տարում՝ 1976-ին այդ հայրենասեր մարդը առագաստանավի վերածած ձկնորսանավով հատեց օվկիանոսը հունիս-օգոստոս ամիսներին:

Ենսենից առաջ գուցե ուրիշներն էլ այդ ձեւով հատած լինեին օվկիանոսը, բայց վավերականորեն նա է առաջինը, մանավանդ որ իր առագաստանավն անվանել էր «Սենթենիել» («Հարյուրամյակ»): Դրանից հետո առագաստանավային սպորտը բուռն վերելք ապրեց: Նույնիսկ գիտական արշավախմբերը սկսեցին օգտագործել արագընթաց առագաստային զբոսանավեր:

Մեր «Արմենիան» իր պարամետրերով իդեալապես հարմար է թե՛ գիտարշավային խնդիրների լուծման եւ թե՛ մարզական նավարկության համար:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**

ԵՎՐՈՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ԵՄ-ը կվերացնի այցագրային ռեժիմը բալկանյան երեք երկրի հետ

**Եվրոհանձնաժողովն առաջարկել է վերացնել այցագրային ռեժիմը բալկանյան պետություններից երեքի՝ Սերբիայի, Չեռնոգորիայի եւ Մակեդոնիայի հետ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, հիմք ընդունելով արդարադատության հարցերի գծով եվրոհանձնակատար Ժակ Բարրոյի հայտարարությունը:**

**Եթե տվյալ նախաձեռնությունը հավանություն ստանա, ապա 2010 թվականի հունվարի 1-ից Սերբիայի, Չեռնոգորիայի եւ Մակեդոնիայի բնակիչները կկարողանան ազատորեն մուտք գործել Շենգենյան գոտու երկրներ:**

**Անայցագիր ռեժիմի համաձայնագիրը պետք է վավերացնեն Եվրոմիության բոլոր 27 պետությունները: Բացի դրանից, փաստաթուղթը պետք է հաստատվի Եվրախորհրդարանում:**

**Միեւնույն ժամանակ նշվում է, որ Բոսնիայի եւ Ալբանիայի բնակիչների համար այցագրերի վերացում առայժմ չի նախատեսվում:**

**Ժակ Բարրոյի խոսքերով, Ալբանիայի եւ Բոսնիայի նկատմամբ սահմանափակումներ ընդունվել են մեծ մասամբ այն պատճառով, որ տվյալ պետությունների տարածքներում դեռ չի սկսվել կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի համակարգված բաժանումը: Ընդսմին Եվրոմիության ընդլայնման հարցերի գծով հանձնակատար Օլլի Ռենը նշում է, որ Եվրոհանձնաժողովը պատրաստ է այդ երկու պետությունների հետ անայցագիր ռեժիմի խնդիրը քննության առնել 2010-ի կեսերին, եթե բոլոր վիճելի հարցերը մինչ այդ հարթվեն:**

**Մակեդոնիան պաշտոնապես Եվրոմիության անդամության թեկնածու է 2005 թվականից: Սերբիան եւ Չեռնոգորիան նույնպես Եվրոմիությանն անդամակցելու հայտեր են ներկայացրել: Սերբիայի անդամակցությունը դժվարանում է այն պատճառով, որ մինչեւ հիմա Հաագայի դատարանին հանձնված չէ բոսնիացի սերբերի բանակի նախկին գեներալ Ռատկո Մլադիչը, որն ամբաստանվում է պատերազմական հանցագործությունների մեջ: Ներկայումս Մլադիչի գտնվելու վայրն անհայտ է: Ենթադրվում է, որ նա թաքնվում է Սերբիայի տարածքում:**

# Լոս Անջելեսը՝ ԱՄՆ-ի «ամենադաժան» քաղաք

**Անօթեւանների իրավունքների պաշտպանները Լոս Անջելեսը համարում են ԱՄՆ-ի «ամենադաժան» քաղաքը: Իրավապաշտպանական երկու խմբեր հրապարակել են համատեղ զեկույց, ըստ որի Կալիֆոռնիայի ամենամեծ քաղաքի իշխանությունները պատժիչ քաղաքականություն են վարում օթեւանից զրկված մարդկանց նկատմամբ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Անօթեւանների գործերի եւ աղքատության հարցերի ազգային իրավապաշտպան կենտրոնը եւ Անօթեւանների օգնության ազգային կոալիցիան վերլուծել են երկրի տարբեր նահանգների 273 քաղաքների օրենսդրությունը եւ վարչական պրակտիկան: Նախորդ համանման զեկույցը կազմվել էր 2006-ին: Փաստաթղթում Լոս Անջելեսը «դաժանության» գծով զբաղեցնում էր 18-րդ տեղը: Բայց դրանից հետո քաղաքի իշխանությունների դիրքորոշումը շատ ավելի է կոշտացել:**

**Փաստաթղթի հեղինակները մասնավորապես մատնանշում են «Ավելի ապահով քաղաք» ծրագիրը եւ մի շարք օրենսդրական արգելքներ: Լոս Անջելեսում արգելված է քնել, նստել եւ անձնական իրեր դնել մայթերի վրա եւ հանրային օգտագործման մյուս վայրերում: Արգելված է նաեւ մուրացկանությունը: Իրավապաշտպանները նմանօրինակ քաղաքականությունն անվանում են «անհեռատես եւ սխալ»: Սակայն քաղաքային իշխանությունները պնդում են, թե այդ քաղաքականությունը հանգեցրել է հանցագործությունների թվի կրճատմանը:**



# Կապիտոլիումին մոտեցած կասկածելի վարորդը գնդակահարվել է

Վաշինգտոնում, Կապիտոլիումի շենքի (որտեղ ԱՄՆ-ի Կոնգրեսն է) մոտ ոստիկանները երեկ գնդակահարել են մի վարորդի, որ չէր ենթարկվել ավտոմեքենան կանգնեցնելու պահանջին:

Տեղական իրավապահ մարմինների ներկայացուցիչը Ասոշիեյթեդ պրես գործակալության թղթակցին ասել է, որ ոստիկանները վարորդին փորձել են կանգնեցնել փաստաթղթերի ստուգման նպատակով:

Փախուստի դիմելով՝ կարգազանց վարորդը նախ մեքենայով հարվածել է երկու ոստիկանների, ապա սկսել է սպառնալ ատրճանակով:

Վախենալով, որ նա կարող է կրակել, ոստիկաններն իրենք են կրակ բացել: Վիրավոր վարորդին շտապ օգնության մեքենայով տարել են հիվանդանոց, բայց նա մահացել է: Այլ մանրամասնություններ չեն հաղորդվում:

Ոստիկանության աշխատակիցների մեջ զոհեր չկան: Թեեւ վնասվածքներ են ստացել այն երկու ոստիկանները, որոնց հարվածել էր ավտոմեքենան:

Միջադեպից հետո Կոնգրեսի շենքը մոտ մեկ ժամ շրջափակված է եղել:

AZG NEW 6.QXD 7/16/2009 10:55 PM Page 1



# «Ոսկե ծիրանը»՝ սփյուռքահայ ռեժիսորների հետ երկխոսության լավագույն առիթ

«Ազգանվան «յան» վերջավորությունը ԱՄՆ-ում պահելն ու արվեստի ոլորտում աշխատելը պատասխանատու եւ դժվար քայլ է: Հիշում եմ՝ 1985-ին հանդիպեցի Ալան Մորիսի մենեջերին: Ասաց՝ որպես դերասան մեծ ապագա է սպասվում, սակայն նշեց մի քանի թերություն, որոնք պետք է շտկեի ԱՄՆ-ում հաջողության հասնելու համար: Այդ «թերությունների» շարքում էր նաեւ հայկական ծագումը վկայող ազգանունից հրաժարվելը: «Այդ «յան» արմատը վերացրու, եթե ուզում ես հայտնի դերասան դառնալ», ասաց նա: Երիտասարդ էի, չգիտեի ինչ անել, բարեբախտաբար տատիկս խորհուրդ տվեց չհրաժարվել ազգանունից ու շարունակել ավելի ոգեւորված աշխատել: Խորհուրդն ընդունեցի, թեպետ հասկանում էի, որ այդ տարիներին կինոարվեստում փոքրամասնության ներկայացուցիչ համարվելը հավասարազոր է ինքնասպանության: Իհարկե փորձությունները, որոնց միջով անցա, չափազանց ծանր էին, սակայն հայկական արմատն ինձ մեծ ուժ




տվեց», պատմում է ամերիկահայ նշանավոր դերասան **Էրիկ Պողոսյանը**:

Հայազգի դերասանը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի առիթով առաջին անգամ գտնվում է Հայաստանում: Ասում է՝ մի քանի օրվա ընթացքում հասցրել է սիրել հայրենիքը, որի մասին այնքան շատ բան է լսել հայազգի տատիկից: Պողոսյանը դերասանական արվեստից զատ զբաղվում է նաեւ գրականությամբ: Վերջին երկու նովելների հիման վրա ամերիկացի ռեժիսորները ֆիլմ են նկարահանել, միաժամանակ նկարահանվում է ամերիկյան հայտնի «Լոնդորդ» սերիալում: «Արծարծում եմ այնպիսի թեմաներ, որոնք հուզում են՝ սեր, ցավ, տառապանք, ատելություն: Համամարդկային են ու հենց այդտեղ կարելի է բացահայտել մարդու էությունը: Այնպես պատահեց, որ ֆիլմերում միշտ մարմնավորում եմ բացասական կերպարների: Չգիտեմ ինչու է այդպես ստացվել, գուցե արտաքինս է համապատասխանում (կատակում է-Հ.Հ.): Սակայն վերջին սերիալում, զարմանալիորեն, մարմնավորում եմ դրական հերոսի»:

Ամերիկահայ դերասանն այժմ ուսումնասիրում է առաջին աշխարհամարտի պատմությունն ու հայերի մասնակցությունը, Թալեաթի սպանությունն ու հայերի ցեղասպանությունը: Նրա բնորոշմամբ հայերի ցեղասպանության մասին շատ է գրվել, խոսվել, ոչ միայն Հայաստանում այլեւ ողջ աշխարհում:

«Երբ զրուցում եմ այլ ազգերի ներկայացուցիչների հետ՝ պարզվում է, որ նրանք մի տեսակ հոգնել են այդ թեմայից: Փորձում եմ այս աշխատությամբ մարդկանց մեջ առաջացնել հետաքրքրություն դեպի հայոց ցեղասպանությունը՝ բացառելու մերժման գաղափարը», նկատում է Պողոսյանը:

«Երբ անցյալ տարի Հարություն Խաչատրյանը հրավիրեց մասնակցելու կինոփառատոնի 5-ամյակին, մտածեցի՝ «Ի՞նչ փոքր տարիք կինոփառատոնի համար»: Սակայն հետագայում այն տպավորությունն էր, որ «Ոսկե ծիրանը» գործում է ոչ թե հինգ, տասը, այլ ավելի շատ տարիներ: Դժվար է 5 տարվա ընթացքում այդքան մեծ ճանաչում ձեռք բերել, հաստատվել, դառնալ սիրելի ու սպասված աշխարհի բազմաթիվ անկյուններում», նկատում է դերասանուհի **Արսինե Խանջյանը**: Համեմատականներ անցկացնելով՝ դերասանուհին նկատում է որակական ու կազմակերպչական առաջխաղացում:

«Մեծ երջանկություն է ունենալ կինոփառատոն, որտեղ միջազգային ծրագրում ներկայացվում է հայկական կինոն», նկատում է Խանջյանը՝ կարեւորելով հայկական համայնապատկեր մրցութային ծրագիրը:

«Երեւանը մեր տունն է, որտեղ էլ ապրենք կամ աշխատենք, միեւնույն է, մեր հայրենիքը Հայաստանն է», նկատում է Անահիտ Նազարյանը: Ֆրենսիս Ֆորդ Կոպոլայի ֆիլմերի պրոդյուսերը մեծ ձեռքբերում է համարում, երբ կարողանում է Կոպոլայի ֆիլմերը ներկայացնել կինոփառատոնին: «Կոպոլան չի սիրում ֆիլմերը ներկայացնել կինոփառատոնին: Նրա նոր ֆիլմը՝ «Տետրոն» ներկայացվել է միայն Կաննի կինոփառատոնում, հաջորդ հանգրվանը «Ոսկե ծիրանն» է, որով սահմանափակվելու է ֆիլմի միջազգային փառատոներին մասնակցությունը»:

«Տետրոն» ընտանեկան դրամա է: 17-ամյա Բեննին գալիս է Բուենոս Այրես՝ ավագ եղբորը՝ Տետրոյին որոնելու: Մեկ տասնամյակ առաջ նա հեռացել էր տանից՝ երդվելով այլեւս երբեք չհանդիպել ընտանիքի անդամներին: Բեննիի հիասթափությունը մեծ է, երբ հանդիպում է պատանեկության կուռքին՝ ինքնակործանման եզրին կանգնած: Տետրոն այլեւս չի ստեղծագործում, կյանքից ու մարդկանցից խռոված անձնավորություն է դարձել: Ֆիլմի վերջաբանում ընտանիքը կրկին հավաքվում է Բուենոս Այրես՝ հոր հուղարկավորության արարողությանը մասնակցելու: Վիշտը համախմբում է եղբայրներին, որոնք երդվում են այլեւս առանձին չապրել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՄՇԱԿՈՒՅԹ 2008»

# Ամեն երկրի դիմագիծը արտահայտվում է իր մշակույթով

**Հայկական մշակույթը դարերի ընթացքում եղել եւ այսօր էլ մնում է իբրեւ մեծագույն արժեք, որը ձեւավորել է հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը: Եվ որքան էլ ծանր ու հակասական լինեն ժամանակները եւ ինչ մարտահրավերներ էլ ծառացած լինեն մարդկության առջեւ, հենց մշակույթն է, որ կրելով իր մեջ մարդասիրական իդեալներ ու գաղափարներ, դառնում է այն ամուր հենարանը, որը թույլ է տալիս դիմակայել ազգային եւ հոգեւոր արժեքների անկմանը: Հայ մշակույթը աշխարհին ներկայացնելու ծրագրի մի մասն է՝ առաջին անգամ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակույթ 2008» նկարազարդ գիրք ալբոմը: Դրանում ներառվել են 2008 թվականին մշակույթի նախարարության իրականացրած մի շարք մշակութային իրադարձություններ ու միջոցառումներ: Գիրք-ալբոմը բաժանված է ինը ենթաբաժինների՝ կինոփառատոներ, երաժշտական փառատոներ, մրցույթներ, թատերական փառատոներ, հոբելյաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, էքսպոզիցիաներ, ծրագրեր, կոնֆերանսներ, մշակութային կրթություն, գրքեր, ֆիլմեր, հեռուստածրագրեր, մշակութային կրթություն, մշակութային ժառանգության պահպանում: Հոբելյաններ բաժնում հատուկ տեղեր են հատկացվել Վիլյամ Սարոյանի, կաթողիկոս Վազգեն Ա-ի 100-ամյակներին, Սարդարապատի ճակատամարտի 90-ամյակին, «Հայկական ջազի» 70-ամյակին, Կոնստանտին Օրբելյանի 80-ամյակին եւ այլն:**




**Ինչպես «Ազգի» հետ զրույցում նշեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, «Այսուհետեւ նման գիրք-ալբոմներ կտպագրվի տարին երկու անգամ: Սա հրաշալի հնարավորություն է, որ պաշտոնական այցերի ժամանակ այս գրքով ներկայացնենք մեր գործունեությունը: Այս ալբոմը շատ ավելի խոսուն է ու պատկերավոր, թե մեր երկրում մշակութային կյանքում ինչ իրադարձություններ են տեղի ունենում»: Համաձայնվելով նախարարի ասածին, նշենք, որ իրոք 160 էջանոց հրաշալի գիրք-ալբոմը մեծ դեր ու նշանակություն կունենա ոչ միայն շփումների ու բանակցությունների ընթացքում, այլեւ այն հանրագիտարանային արժեք է ներկայացնում:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Նաեւ հավատ ու աստվածավախություն

**«Հայությունը, որպես ազգ իր գոյությունը հաշվում է հազարամյակներով, որի մի մասը, սակայն ընթացել է ազգի դեգրադացիայով»: Այս մասին «Ուրբաթ» ակումբում խոսեց քաղաքական վերլուծաբան Արծրուն Պեպանյանը:**

**Արծրուն Պեպանյանը, որպես խորացող հասարակական ճգնաժամի լուծում տեսնում է հայի վառ անհատականացված, ինքնահարգող տեսակի վերադարձը եւ վստահ է, որ դրա իրականացմանը զորու չեն հայաստանյան քաղաքական ուժերը, որոնք հիմնականում աթեիստական գաղափարախոսություն կրող անձանցից են կազմված, իսկ նշյալ նպատակի իրականացումը պահանջում է նաեւ հավատ ու աստվածավախություն:**

**Ն. Պ.**

# «Մեծ մորս բուն անունը»

***ԹՄՄ Կանադայի պաշտոնաթերթ «Ապագայի» հունիսի 15-ի համարը տեղեկացնում է, որ թուրքական «Հյուրիեթ» թերթի մայիսի 27-ի համարում առաջին էջի ճակատին տեղ է տրվել Բեքիր Զոշքունի «Մեծ մորս բուն անունը» խորագրով նյութին, որի շարունակությունը «Ականատեսն եմ» ենթախորագրով շարունակվել է մյուս էջերից մեկում: «Ապագայ» թերթը տպագրել է այդ հոդվածի թարգմանությունը, որտեղից քաղում ենք հետեւյալը.***

**«Կանաչ աչքեր ուներ նա: Ես՝ որբս, առաջին պատմությունը նրանից էի լսել: Դժվարությամբ էր ճաշ կերցնում ինձ: Ապա լողացնում եւ գիշերները ծածկում վրաս: Շատ էի սիրում նրան: Երբ մեծացա, տեղեկացա, որ իմ հարազատ մեծ մայրս չէր: Նա հայի աղջիկ էր, որի ընտանիքի բոլոր անդամները սպանվել էին: Նա Գյումուշհանեյի կողմից փախչելով, կարողացել էր կյանքը փրկել: Հասել էր հորս մոտ եւ դարձել նրա երկրորդ կինը: Այն թախիծն ու ցավը, որ առկա էր իր աչքերում, երբեք չանհետացավ: Անունը փոխել էին եւ նրան կոչում էին «Ումմուհան»:**

**Տարիներ անցան եւ ես մեկ այլ մարդու էլ ճանաչեցի, որի ձեռքերի 3 մատները հաշմված էին: Շատ վայելուչ եւ մաքուր հագնված էր, սակայն այլեւս ոչ ջութակ նվագելու, ոչ էլ փայտի վրա փորագրություններ անելու ընդունակ էր: Նախկինում ճարտարապետ էր եղել: Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ժամանակ գրավել էին գրասենյակը եւ վնաս պատճառել ձեռքերին: Հետագայում Անկարա տեղափոխվելով սկսել էր աշխատել դեսպանատան մեջ: Ցանկանում էր արտասահման մեկնել, բայց չէր կարող, որովհետեւ երկու աղջիկները սիրահարվել էին թուրքերի եւ չէր կարող նրանց թողնել ու հեռանալ: Նրանցից մեկը իմ ներկա կինն է: Նա աղճատյալ թրքերենով էր ինձ հետ խոսում: Զգում էի, որ նրանում թաքնված վախ կա եւ մտահոգություն: Կտակել էր մեռնելու դեպքում թաղվել Ստամբուլում: Կտակը ի կատար ածվեց:**

**Այս բոլորը գրելու առիթը հանդիսացավ թերթում տպագրված վարչապետի խոսքերը այն մասին, որ ֆաշիստական մերձեցում էր ցեղային տարբեր ինքնություն ունեցողներին մեր երկրից վտարելը: Այդ խոսքերը ճիշտ են: Ինչպե՞ս կարելի է ուրանալ»:**

**Ամենուրեք չկա՞ն արդյոք այդ երեւույթի թաքուն փաստերը: Այստեղ հին հայկական մի տուն, այնտեղ հունական մի ափսե, կամ ասորիի մի վզնոց, մի հին նկար, մի երգ...**

**Որտե՞ղ են այդ մարդիկ: Կամ մեր մեծ մայրերը, որոնց իսկական անունները անծանոթ են մեզի: Մեզանից ամեն մեկի ճակատին չկա՞ արդյոք այն «մեղքը», որ պարտավոր ենք ընդունել: Ես տեսել եմ այդ մեղքը...»:**

**Հ. Ծ.**

# Սերգեյ Սոլովյով. «Ստիպողաբար ֆիլմ չեն նկարահանում. կարեւորը զգացմունքներն են»

**«Ոչ թե հետեւում էր ու ընդօրինակում ուրիշների արվեստը, այլ ինքն էր մշակույթ արարում: Նրանք, ովքեր մեծացել են ԱՍՍԱ-ի երաժշտության տակ, կհասկանան այս խոսքերի իմաստը», ռուսական կինոռեժիսուրայի ամենահայտնի դեմքերից Սերգեյ Սոլովյովին է ներկայացնում վավերագիր ռեժիսոր Տիգրան Խզմալյանն ու նրա ֆիլմարվեստը բնորոշում «յուրահատուկ սքանչելիություն» արտահայտությամբ:**

**«Վարպետության դաս չէ, ինչ-որ բան պարտադրել չեմ սիրում, չեմ սիրել, երբ ինձ են պարտադրել դոգմաներ, գաղափարներ: Կցանկանամ հայ հանդիսատեսին, երիտասարդ կինոսերներին ներկայացնել անձնական տեսակետներ՝ ինչպես նկարահանել ֆիլմ: Իմ խոսքերը պետք չէ ընդունել դեղատոմս: Դրանք իմ զգացմունքներն ու պատմություններն են: Գուցե ուրիշների մոտ այն այլ կերպ ստացվի կամ միգուցե չստացվի», նկատեց Սոլովյովը:**

## Սկզբունքներ, արվեստ, գաղափարախոսություն

**«Կոնցեպտուալ անձնավորություն չեմ, այդ բառից վախենում եմ: Վստահ եմ, որ հայեցակարգերը կարող են տանել փակուղի: Տարիներ առաջ հրաշալի ճապոնական ասացվածք կարդացի. «Սկզբունքներ չունեմ, ունեմ նյարդեր», շատ հավանեցի. դարձավ իմ կյանքի ու հատկապես ստեղծագործական գործունեության նշանաբանը: Իմ սկզբունքները ծիծաղաշարժ են, հաճախ անհեթեթ: Նյարդերի ու աշխարհի, հասարակության հետ համագործակցությունն է ծնում արվեստ: Այնտեղ նպատակներ ու գաղափարներ չկան: Արվեստը հնարավոր է հասկանալ, ընկալել միայն այն ժամանակ, երբ մարդկային ուղեղը դադարում է աշխատել, գաղափարները, նպատակներն ու ամբիցիաները մահանում են: Միայն այդ ժամանակ կարող ես լսել ու ընկալել Մոցարտի երաժշտությունը, Վան Գոգի գույները...**

**Ինձ հարկավոր չէ սուտ, կեղծիք: Խաբեությունն ինձ հետաքրքիր չէ: Երիտասարդ տարիքում հասկացա, որ ամենից կարեւորը սերն է, անկեղծությունն ու ազատությունը:**

**Մինչեւ 13 տարեկան երազում էի դառնալ ջրասույզ: Պաշտում էի նրանց համազգեստը, տեսել էի նրանց մասին բոլոր ֆիլմերը, կարդացել էի բազմաթիվ գրքեր: Կինոթատրոնում տեսա «Ուրախ կռունկները թռչում են» ֆիլմն ու... Ավարտին չէի հասկանում, թե ինչ կատարվեց: Գլխապտույտ ունեի, այնքան տպավորված էի ֆիլմով, դերասաններով ու պատմությամբ, որ անգամ շնչելը դժվար էր: Հենց այդ ժամանակ հասկացա, որ ուզում եմ դառնալ կինոռեժիսոր, դա՛ է իմ առաքելությունը: Այստեղ տրամաբանություն չկա: Կա զգացողություն, որ ինձ համար միեւնույն չէ: Այդ զգացողությունը չեմ կարող բացատրել, ինձ համար էլ այն շարունակում է մնալ գաղտնիք:**

## Մաքուր ֆիլմի գաղափարախոսությունը

**«Ինձ համար կա մեկ հասկացություն՝ «մաքուր ֆիլմ»: Գաղափարախոսությունը շատերը չեն հասկանում: «Մաքուր», որտեղ միտք, գաղափարախոսություն չկա: Օրինակ հարսնացուն ճերմակ զգեստով քայլում է խորանով ու մոտենում սիրելիին: Ավելի «մաքուր տեսարան» անհնար է պատկերացնել: Փարաջանովին անընդհատ քննադատել են: Քչերն էին հասկանում նրանց լեզուն, սակայն կա մի բան, որ կատարվում էր ենթագիտակցորեն, վստահ եմ, այն ոգեւորում էր ռեժիսորին, ինչից ծնվում էին այդ հրաշալի ֆիլմերը: Դա կատարվում է գիտակցությունից դուրս, այդ պահին իշխում են միայն զգացմունքները....**

**Հաճախ են հարցնում, թե ինչ եմ ցանկանում նկարել, կամ ինչու հենց այդ տեսարանով: Դրա բացատրությունը չեմ կարող տալ: Միայն խորհուրդ եմ տալիս զգալ, սիրտը երբեք չի դավաճանի...**

**Ատում եմ քաստինգները, չեմ հասկանում դրա նպատակը: Ինչպես կարելի է սցենար գրել, հերոս ներկայացնել ու չպատկերացնել, թե ինչպիսին պետք է լինի հերոսը: Երբ կարդում եմ սցենարը, արդեն պատկերացնում եմ հերոսի արտաքինը, անգամ ձայնն ու հագուստը...**

## Երաժշտությունը ֆիլմի հոգին է

**«Սիրում եմ երաժշտությունը: Այն ֆիլմի հոգին է: Երբ ֆիլմի երաժշտությունը համապատասխանում է կադրերին, ասում եմ «բրավո». դա վարպետություն է: «Աննա Կարենինա» ֆիլմի երաժշտությունը գրել է աղջիկս՝ Աննան...**

**Պետք չէ պարտադրված ֆիլմ նկարահանել, պարտադրանքը էկրանից էլ երեւում է: Առաջին երկու շաբաթվա ընթացքում ֆիլմի նկարահանման գործընթացը դանդաղ, դժվար է ընթանում, հետո ամեն ինչ ստացվում է: Դա նման է խաղի, երբ հրում ես պտտվող սեղանը, այն շարունակում է պտտվել առանց դժվարության: Ֆիլմի նկարահանումն էլ է այդպես: Սակայն, եթե չի ստացվում, ավելորդ ջանք մի գործադրեք, ստիպողաբար ֆիլմ չեն նկարահանում, կարեւորը զգացմունքներն են...**

Պատրաստեց

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

AZG NEW 7.QXD 7/16/2009 11:20 PM Page 1



ՇԱԽՄԱՏ

# Առաջատարը փոխվեց

Մարտունիում ընթացող շախմատի «Սեւանա լիճ» միջազգային մրցաշարի 6-րդ տուրում կենտրոնականը միանձնյա առաջատար Լեւոն Բաբուջյանի եւ հանրապետության ներկայիս չեմպիոն Արման Փաշիկյանի մրցավեճն էր: Հաղթանակի դեպքում Բաբուջյանը կամրապնդեր առաջատարի իր դիրքը, իսկ եթե հաջողությունն ուղեկցեր Փաշիկյանին, ապա վերջինս կգլխավորեր աղյուսակը: Այնպես որ, հաղթանակի արժեքը բավական բարձր էր: Սպիտակներով խաղացող Փաշիկյանին հաջողվեց հաղթել մրցակցին եւ 4 միավորով գլխավորել աղյուսակը: Լեւոն Բաբուջյանը մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեց: Այժմ միայն Փաշիկյանն ու Սամվել Տեր-Սահակյանն են դեռեւս անպարտելի:




Ընդհանրապես 6-րդ տուրն արդյունավետ էր: 5 պարտիաներից միայն մեկում՝ Ռինաս Ջումաբաեւի եւ Իգոր Լիսիջի մրցավեճում խաղաղ ելք գրանցվեց: Սամվել Տեր-Սահակյանը հաղթեց Տիգրան Քոթանջյանին, Սերգեյ Ժիգալկոն առավելության հասավ Չհաո Լիի նկատմամբ, իսկ Ֆերենց Բերկեշը պարտության մատնեց Ավետիք Գրիգորյանին:

Մրցաշարի ավարտից 3 տուր առաջ աղյուսակում շախմատիստները շատ խիտ են դասավորված եւ վերջնագծում յուրաքանչյուր հաջող մրցելույթ կամ «սայթաքում» կարող է զգալիորեն ազդել մրցաշարային իրավիճակի վրա: Չորս շախմատիստներ՝ Լեւոն Բաբուջյանը, Սերգեյ Ժիգալկոն, Ֆերենց Բերկեշն ու Սամվել Տեր-Սահակյանը 3,5-ական միավորով հետապնդում են առաջատարին: Նրանցից կես միավորով հետ են մնում Իգոր Լիսիջը, Ավետիք Գրիգորյանը եւ Չհաո Լին: 1,5-ական միավորով աղյուսակը եզրափակում են Տիգրան Քոթանջյանն ու Ռինաս Ջումաբաեւը:

# Օլիմպիադայում Մեծ Բրիտանիան կներկայացնի Անգլիայի հավաքականը

Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի եւ Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիաները համաձայնել են, որ Լոնդոնում կայանալիք 2012-ի ամառային օլիմպիադայի ֆուտբոլի տղամարդկանց եւ կանանց մրցաշարերում Մեծ Բրիտանիայի հավաքականը ներկայացնեն միայն անգլիացիները: Այս որոշումն ուղարկվել է ՖԻՖԱ, որը պահանջել էր մինչեւ հուլիսի վերջը կողմնորոշվել հավաքականի կազմավորման հարցում:

Մեծ Բրիտանիայի հավաքականն ամառային օլիմպիադաներին մասնակցել է միայն 20-րդ դարի սկզբին: Այն ժամանակ ֆուտբոլի հայրենիքի ներկայացուցիչները շատ ուժեղ էին եւ հաղթող ճանաչվեցին 1908-ին Լոնդոնում եւ 1912-ին Ստոկհոլմում անցկացված օլիմպիական մրցաշարերում: Ընդ որում այն ժամանակ բրիտանացիներին ներկայացնում էին միայն անգլիացիները: Սակայն հետագայում Ուելսի, Շոտլանդիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիաներն իրենց ինքնուրույնությունը հաստատելու համար ամեն ինչ արեցին, որպեսզի անգլիական ֆուտբոլը ոչ մի ձեւով ներկայացված չլինի օլիմպիական խաղերում: Իրենց ֆուտբոլիստներին նրանք հրաժարվում էին գործուղել Մեծ Բրիտանիայի հավաքական՝ դրանում տեսնելով Լոնդոնի իշխանություններին ենթարկվելու միտում եւ ՖԻՖԱ-ում սեփական դիրքերի խարխլման վտանգ: Իսկ Անգլիայի հավաքականը չէր կարողանում ներկայացնել Մեծ Բրիտանիան, քանի որ մյուս ֆեդերացիաները դրա իրավունքը չէին տալիս: Այդ պատճառով էլ տասնամյակներ շարունակ բրիտանական ֆուտբոլը բացակայում էր օլիմպիական խաղերից:

Իրավիճակը սկսեց փոփոխվել միայն 21-րդ դարում, այն էլ վերջերս: Մարտի վերջին Շոտլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիան հանդես եկավ հայտարարությամբ, որով տեղեկացվում էր, որ Լոնդոնի օլիմպիադային մասնակցել ցանկացող շոտլանդացի ֆուտբոլիստների նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվի: Այնուհետեւ հետեւեց բրիտանական երեք ֆեդերացիաների վերը նշված որոշումը, որ Անգլիայի ֆուտբոլի հավաքականը կներկայացնի Մեծ Բրիտանիան օլիմպիադայում: Իսկ դա նշանակում է, որ ֆուտբոլասերները Լոնդոնում հնարավորություն կունենան դիտելու ոչ միայն անգլիացի երիտասարդ ֆուտբոլիստների, այլ ասենք Դեւիդ Բեքհեմի, Մայքլ Օուենի եւ Ուեյն Ռունիի խաղը: Հիշեցնենք, որ օլիմպիադայում թույլատրվում է 23-ից բարձր երեք ֆուտբոլիստ ընդգրկել հավաքականում:

# «Էստուդիանտեսի» գավաթային չորրորդ բարձունքը

Արգենտինական «Էստուդիանտեսն» իր պատմության մեջ չորրորդ անգամ նվաճեց Լիբերտադորեսի գավաթը: Եզրափակիչ պատասխան խաղում արգենտինացիները 2-1 հաշվով հաղթեցին բրազիլական «Կրուզեյրոյին» եւ 1970-ից հետո առաջին անգամ դարձան Լատինական Ամերիկայի ամենահեղինակավոր մրցաշարի հաղթող: Արգենտինայում կայացած մրցակիցների առաջին հանդիպման ժամանակ դարպասները մնացել էին անառիկ, ուստի ամեն ինչ վճռելու էր պատասխան խաղը:

Գլխավոր իրադարձությունները ծավալվեցին 2-րդ խաղակեսում: Հաշիվը 52-րդ րոպեին բացեցին բրազիլացիները: Աչքի ընկավ Էնրիկեն: Հետագայում արգենտինացիներին հաջողվեց տիրել նախաձեռնությանը եւ Ֆեռնանդեսի ու Բոսելիի




խփած գոլերի շնորհիվ շահել խաղը: «Էստուդիանտեսի» ավագ, 34-ամյա Խուան Սեբաստիան Վերոնին հանձնվեց Լիբերտադորեսի գավաթը:

# Լորենցոն ու Սիլվեստրը կվիճարկեն Աբրահամի չեմպիոնական գոտին

Այն բանից հետո, երբ Արթուր Աբրահամը տեղափոխվեց առաջին միջին քաշ, միջին քաշում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի նրա տիտղոսը թափուր մնաց: IBF-ի ղեկավարությունը որոշում է կայացրել, որ այդ տիտղոսի համար պետք է պայքարեն Ջովանի Լորենցոն եւ Սեբաստիան Սիլվեստրը: Վերջինս անցյալ տարվա նոյեմբերին WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկել էր Ֆելիքս Շտուրմի հետ, սակայն պարտվել էր:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

# Նախկին ԽՍՀՄ-ի ակումբները հաջող ելույթներ ունեցան

**Չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին հանդիպումներում բավական հաջող խաղացին նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների թիմերը: Մոլդովայի չեմպիոն «Շերիֆը» հյուրընկալվելիս 1-0 հաշվով պարտության մատնեց ֆիննական «Ինտերին»: Մրցակցի դաշտում խոշոր՝ 4-0 հաշվով հաղթանակ տոնեց Ղազախստանի**



**«Ակտոբեն», որը շահեց իսլանդական «Հաֆնարֆյորդուրի» հետ մրցավեճը: Լատվիական «Վենտսպիլսն» էլ սեփական հարկի տակ 3 անպատասխան գնդակ խփեց Լյուքսեմբուրգի «Դյուդելանժի» դարպասը: Ընդ որում հյուրերին մինչեւ 79-րդ րոպեն հաջողվել էր դարպասն անառիկ պահել:**

**Չեմպիոնների լիգայում գրանցված ամենախոշոր հաշվով հաղթանակները տոնեցին դանիական «Կոպենհագենն» ու Իսրայելի Հայֆա քաղաքի «Մաքաբին», որոնք 6 անպատասխան գնդակ խփեցին համապատասխանաբար Չեռնոգորիայի «Մոգրենի» եւ հյուսիսիռլանդական «Գլենտորանի» դարպասներին: Վրաստանի չեմպիոն «ՎԻՏ Ջորջիան» սեփական հարկի տակ ոչ-ոքի (0-0) խաղաց Սլովենիայի «Մարիբորի» հետ:**

**Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Տիրանա» (Ալբանիա)-«Ստաբեկ» (Նորվեգիա)՝ 1-1, «Դեբրեցեն» (Հունգարիա)-«Կալմար» (Շվեդիա)՝ 2-0, «Զալցբուրգ» (Ավստրիա)-«Բոգեմիանս» (Իռլանդիա)՝ 1-1, «Զրինսկի» (Բոսնիա եւ Հերցեգովինա)-«Սլովան» (Սլովակիա)՝ 1-0, «Վիսլա» (Լեհաստան)-«Լեւադիա» (Էստոնիա)՝ 1-1, «Լեւսկի» (Բուլղարիա)-«Սան Խուլիա» (Անդորրա)՝ 4-0:**

# Մովսիսյանի հերթական ոչ-ոքին

**Իտալական Սան Սեբաստիան քաղաքի շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Սերգեյ Մովսիսյանը սեւերով մրցեց մրցաշարի առաջատար Հիկարու Նակամուրայի հետ: Գրանցվեց ոչ-ոքի: Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ Նակամուրան 6 միավորով միանձնյա առաջատարն է եւ կես միավորով առաջ է անցել Ռուսլան Պոնոմարյովից: Վերջինս ոչ-ոքի ավարտեց պարտիան Պյոտր Սվիդլերի հետ: Ռուս շախմատիստը Ֆրանցիսկո Վալյեխոյի հետ ունի 5 միավոր: Վալյեխոն պարտության մատնեց Սան Սեգունդոյին:**

**Անհաջող մրցելույթներն է շարունակում Անատոլի Կարպովը, որը հերթական պարտությունը կրեց Ռուստամ Կասիմջանովից: Վերջինս 4,5 միավորով 5-րդ տեղում է, իսկ Կարպովը 1 միավորով եզրափակում է աղյուսակը: Սերգեյ Մովսիսյանը Մաքսիմ Վաշյե-Լագրավի հետ 4 միավորով բաժանում է 6-7-րդ տեղերը: Վաշյե-Լագրավը հաշտություն կնքեց Խուլիո Գրանդայի հետ:**

# Կեմպինսկու հաղթարշավը շարունակվեց

**Հունաստանի Իկարիա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Նելլի Աղինյանը ոչ-ոքի խաղաց դանիացի Կուրտ Կլիֆոտի հետ ու վաստակեց 4 միավոր: Հաղթարշավն է շարունակում լեհ Ռոբերտ Կեմպինսկին, որը 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Սերգեյ Զագրեբելնիի նկատմամբ: 5,5 միավորով 2-րդ տեղում է սերբ Ռոբերտ Մարկոսը, որը հաղթեց Հարալդ Գրոյթցին: 6 շախմատիստ վաստակել է 5-ական միավոր:**

# Ռոմարիոյին մեղադրում են ապահարզան չվճարելու համար

**Ռիո դե Ժանեյրոյի ոստիկանությունը կալանավորել է աշխարհի նախկին չեմպիոն, բրազիլացի Ռոմարիոյին: Նրան մեղադրում են ապահարզան չվճարելու համար: Նրա նախկին կինը՝ երկու երեխաների մայր Մոնիկա Սանտորոն դիմել էր ոստիկանությանը, հայտարարելով, որ Ռոմարիոն ուշացնում է ապահարզանի վճարումը: Ըստ նրա, Ռոմարիոյի պարտքը մոտ 50 հազար բրազիլական ռեալ է (25 հազար դոլար): Սակայն Ռոմարիոյի փաստաբանները պնդում են, որ Ռոմարիոն ոչ մի օրենք չի խախտել եւ կանոնավոր վճարել է ապահարզանը, ինչը վկայում են անդորրագրերը: Նրանք հույս ունեն, որ անճշտությունը շուտով կպարզվի եւ Ռոմարիոն ազատ կարձակվի:**

# Աղեբայորը կհամալրի «Մանչեսթր Սիթին»

**Անգլիական «Մանչեսթր Սիթին» շարունակում է կազմն ուժեղացնելու աշխատանքները: Շուտով պայմանագիր կկնքվի «Արսենալի» հարձակվող Էմանուել Աղեբայորի հետ: Տոգոյի հավաքականի ֆուտբոլիստը հաջողությամբ է անցել բժշկական հետազոտությունը եւ մնում է միայն Անգլիայում աշխատելու իրավունք ստանա: Նրա տրանսֆերը գնահատվել է 25 մլն ֆունտ ստեռլինգ:**

# 55 մլն եվրո Ռիբերիի դիմաց

**Մադրիդի «Ռեալը» շարունակում է առաջարկները Մյունխենի «Բավարիայի» կիսապաշտպան Ֆրանկ Ռիբերիի հարցով: Նախկին 47 մլն եվրոյի փոխարեն «Ռեալը» նրա համար 55 մլն է առաջարկել, սակայն կրկին մերժում է ստացել: «Բավարիան» իր խաղացողի համար 80 մլն եվրո է պահանջում:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 7/16/2009 10:54 PM Page 1



# Պահի գեղեցկությամբ

Պետհամալսարանի կենտրոնական շենքի կանաչապատ տարածքում մի ծառ, երբ ծաղկում է, մյուսներից շատ տարբեր է, ծաղիկները՝ նրբագույն, հաջորդաբար փոփոխվում են, ամեն անգամ նոր տեսք ու հրապույր ստանում: Սա կարծես առանձնահատուկ բույս է, նրա մեջ խորհրդավոր ձգողական ուժ կա. անորսալի, թույլ դեղնակարմրաճերմակավուն թրթռացող ծաղկաբույլերը կանաչի ընդհանուր զանգվածին նուրբ, եթերային տրամադրություն են հաղորդում: Երբ հայացքս դիպավ իրեն, դաջվեց, մնաց: Մնաց ոչ միայն իր արվեստային գեղեցկությամբ, ինչպես Բաղրամյան փողոցի ծանոթ նռնենին, այլեւ՝ կարոտ առաջացնող տարօրինակ հատկությամբ: Հիմա այդ ծառը շարունակ ինձ դեպի իրեն է քաշում: (Լինում են նաեւ այսպիսի պահեր՝ օրերի այս շփոթում):

Համալսարանի կանաչապատ այս հատվածը քաղաքի լավագույն եւ բարեբախտաբար անխաթար մնացած վայրերից է (այստեղ կրպակ, սրճարան եւ նման բաներ չկան), շենքի դիմացից աջ ու ձախ կանաչապատ հատվածներ են, կենտրոնում՝ վարդերով բոլորակված շատրվանն ու ավազանը, հայոց երկու մեծերի՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի, աջից՝ Անանիա Շիրակացու, ձախից՝ Մ. Խորենացու քանդակները (փույթ չէ, որ դրանք այդքան էլ հաջողված չեն): Ավտոմեքենաների նորակառույց գետնանցիկ ճանապարհը եւ դիմացի Օղակաձեւ զբոսայգին ամբողջացնում են միջավայրը. մեր քաղաքում շատ չեն այդպիսիք:

Այստեղով անցնելիս մի փոքր դանդաղում եմ, հայացքս փաղաքշանքով անցնում է ծառի վրայով, իսկ երբ կողքի նստարանին ես՝ թիկունքից հանգիստ, անդորրաբեր մի զգացում ես ունենում: «Այս ծառը 50 տարեկան է, ծերացել է, հարկավոր է կտրատել, ձեւավորել, իսկ այն մյուսը պետք է վերացնել, պնդերես բույս է, ասֆալտի վրա էլ է աճում, վտանգավոր է, ալերգիկ», զրուցակցին ասում էր մի կին: «Այգեպա՞նը», ժպտացի մտքումս: **Գոհար Գեւորգյանն** էր, ծանոթացանք, պետհամալսարանի կանաչապատման բաժնի պետը: Ասացի, որ այստեղի կանաչը ոչ միայն լավ խնամված է, նաեւ մի տեսակ ջերմություն, ձգողականություն ունի: Պատասխանեց, թե ամենօրյա խնամք ու գուրգուրանք են ստանում դրանք, որ ինքն ապրում է ամեն ծառ ու թփի, ծաղկի ճակատագրով, նրանց պատմությամբ: «Ոտքը վնասել էր, մի քանի օր չէր գալիս աշխատանքի, ծառ ու ծաղիկն ասես խռովել էին, ուշադրությունից զրկվել», ասաց կողքից մի աշխատակից: Ոտքը դեռ չապաքինված եկել, ուշադիր զննում է կանաչ ամեն անկյուն, ամեն թուփ, եկել է, որովհետեւ այս ծառ ու ծաղիկը իր կարիքը շատ ունեն ու կարոտում են:

Միջավայրի գեղեցկությունը բարեխիղճ աշխատանքից բացի բնության արժեքը հասկացող ու գնահատող, բույսի ու ծառի աշխարհը ճանաչող, ինչպես դրա օգտակարությունը նաեւ գեղագիտությունը զգացողի վերաբերմունք է: Իր կյանքի 51 տարին Գոհար Գեւորգյանը կանաչապատման հարդարանքին, մշակույթին է նվիրել՝ աշխատել



սկսելով դեռ ուսանողական տարիներից, երբ սովորում էր գյուղատնտեսական ինստիտուտի այգեգինեգործական ֆակուլտետում: Օղակաձեւ զբոսայգու, Չարենցի հուշարձանի հատվածի կանաչապատողն, ձեւավորողն է եղել. «Փողոցի շինարարության ժամանակ ջրհան պոմպը քանդեցին, հիմա չորանում են արծաթափայլ բարդիները»: Տխրում է. «Քաղաքը օրեցօր զրկվում է կանաչ շնչառությունից, ծառերը ձեւավորելու անվան տակ վերացնում, տեղը սրճարաններ են կառուցում»:

Համալսարանի իր բարդիներից, որոնք սերմ չեն տալիս, մյուսների պես չեն տարածում սերմը, շնչառության համար էլ վտանգավոր չեն, իր լացող ուռենիներից է պատմում: «Համալսարանի այս պուրակը յուրահատուկ հանգստություն, աչք շոյող գեղեցկություն ունի», ասում եմ: Ինքը ժպտում է. «Այստեղ այնպիսի ծառ ու ծաղիկ, թփեր եմ աճեցնում, որ հերթականությամբ ծաղկեն: Ահա ֆորզեցիան, երբ արդեն դադարում է ծաղկել, դիմացի սպիրեավանգուտան սպիտակ ծաղիկներ է տալիս»:

«Իսկ այն մեկը, այս խորհրդավոր հրա՞շքը», հարցնում եմ: «Սա սկումբրիան է, դրախտածառը»: Լռում եմ: «Այնտեղ հիմալայան մայրին է, քաղաքում դրանցից երկուսն են, մեկը՝ Անգլիական (նախկին՝ 26 կոմիսարների) այգում: Տնկարանից շատ վաղուց ենք բերել, այն ժամանակ հնարավոր չէր այդ հազվագյուտ տեսակներից շատ ունենալ: Սրանցից հետո սիրիական վարդն է ծաղկում: Ահա եւ մետասեկվոյան՝ բարձր ու ձիգ, եւս հազվագյուտ տեսակ եղեւնու տերեւներով, այնտեղ ունենք ձիակասկ՝ Կիեւից բերված: Երբ ծաղկում է,



ոնց որ նորահարս լինի, սպիտակ ծաղիկը խաղողի ողկույզի նման է, բայց վեր բարձրացող», խոսում է այնպիսի գորովով, ինչպես սեփական զավակների մասին կխոսեր...

Հայացքս՝ շուրջս տարածված կանաչին, սաղարթներում թաքնված լռությանը:

... Դրախտածառ, հեքիաթային, մշուշվող, փախչող դու գեղեցկություն. ասես իմպրեսիոնիստական գեղանկար, հեռավոր ո՞ր երկրից, տեսնես, ո՞ր ժամանակից ես եկել...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՅՈՒՂ

# Բերքը քիչ է, եկամուտը՝ նվազ, իսկ այդ մասին մտածող չկա

**Արմավիրի մարզի Տանձուտ գյուղի բնակիչ Միշա Գրիգորյանը 71 տարեկան է: Ամեն օր վաղ առավոտյան արթնանում է, իջնում տնամերձը եւ օրն սկսում հենց այդտեղից: Օրական աշխատում է 8-10 ժամ: Դաշտից տուն է վերադառնում ուշ երեկոյան: Ասում է, որ հողից մշտական ուժ է ստանում, եկամուտ, սակայն՝ ոչ միշտ: Ստացված բերքը գրեթե չի արդարացնում ներդրված ծախսը: «Պարարտանյութը փող է, տրակտորիստին առանձին եմ գումար տալիս, բերքը քաղաք հասցնելն առանձին ծախս է: Դեռ չեմ հաշվում, թե որքան գումար եմ վճարում կողմնակի ծախսերի համար: Վերջում գյուղացուն օգուտ չի մնում», ասաց Միշա Գրիգորյանը: Սրան էլ գումարած՝ վճարում է վերցված վարկի տոկոսները:**

**Արմավիրի մարզի Գրիբոյեդովո գյուղի բնակիչ, 49-ամյա Աշոտ Մարտիրոսյանը եւս բանկից մեկ տարի ժամկետով վարկ է վերցրել: Ասում է, որ գյուղացին այսօր մատչելի վարկավորման անհրաժեշտություն ունի: «Ես վարկ եմ վերցրել 2,7 տոկոսով: Սա բարձր տոկոսադրույք է, բացի այդ, երկար ժամանակով գյուղացուն վարկ չեն տալիս: Լավ կլիներ, որ վարկը գոնե 5 տարով տրվեր, որովհետեւ, եթե ես ուզում եմ այդ գումարով այգի գցել, բերք կստանամ 3 տարի հետո», ասաց Աշոտ Մարտիրոսյանը: Այս տարվա բերքատվությունից դժգոհ է: Ասում է, որ մի պարկ պարարտանյութի համար 12.000 դրամ է վճարում, որակն էլ գոհացուցիչ չէ: Հետո էլ բերքը հանձնում է վերավաճառողներին: «Եկամուտ մեզ գրեթե չի մնում», ասաց Աշոտ Մարտիրոսյանը:**

**«Ֆերմերային շարժում» ՀԿ-ի նախագահ Սարգիս Սեդրակյանը գյուղատնտեսության զարգացման համար պետության ագրարային ճիշտ քաղաքականության որդեգրում է ակնկալում: «Գյուղերում այսօր ծաղկում է ֆեոդալիզմը», ասաց Սարգիս Սեդրակյանը: Լավատեսության հիմք նա չի տեսնում, ավելի քան 3000 գյուղացիների շրջանում իր ղեկավարած ՀԿ-ի անցկացրած հարցումներն էլ հաստատում են նրա տրամադրությունները: «Նվազե՞լ է գյուղական աղքատությունը» հարցին գյուղացիների միայն 2.8 տոկոսն է դրական պատասխանել: «Գյուղում քանի՞ տոկոս են կազմում աղքատները եւ ծայրահեղ աղքատները» հարցին պատասխանել են՝ աղքատները՝ 70.9 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատները՝ 39.3 տոկոս: Մինչդեռ, պետական պաշտոնական տվյալների համաձայն, աղքատները 23.4 տոկոս են, ծայրահեղ աղքատները՝ 2.4 տոկոս», ասաց Սարգիս Սեդրակյանը:**

**Միշա Գրիգորյանը ողջ կյանքում ապրել է Տանձուտ գյուղում: Ասում է, որ գյուղն այսօր դատարկվում է: Երիտասարդները գյուղում չեն մնում: «Ապրելու եւ աշխատելու համար նորմալ պայմաններ չկան», ասաց Միշա Գրիգորյանը:**

**«Խնդիրները սկսվում են հենց ցանքսի ժամանակաշրջանից: Ցանքսը կատարում ենք եւ հետո սպասում, թե երբ ոռոգման ջուր կտան: Այս տարի դաշտը ջրել ենք ցանքսից մեկ ամիս հետո», ասաց Աշոտ Մարտիրոսյանը:**

**«Ֆերմերային շարժում» ՀԿ-ի անցկացրած հարցման համաձայն՝ գյուղացիների 92.3 տոկոսը զգում է պետության աջակցության կարիքը:**

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Դիլիջան քաղաքում բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 42 10 08 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Շենգավիթ» մասնաճյուղ ք. Երևան, Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 9:00-11:00 (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հուլիսի 13-ից մինչև հուլիսի 23-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐ ՁԵՌՔՈՒՄ

ԱՆՎՃԱՐ Java-ծրագիր բջջային հեռախոսների համար

- փոքր ծավալ (200 կԲ)
- ուղղակիորեն զանգելու հնարավորություն
- աշխատում է առանց Ինտերնետի

Բեռնեք ծրագիրը **www.spyur.am/mobile** հասցեից

*«Սփյուռ» տեղեկատվական կենտրոն*

*Հեռ.՝ 562635*



«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ Օրենսդրական նորություններ ♦ Պարզաբանումներ ♦ Խորհրդատվություն

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար*

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

## Վաճառվում է

ավտոլվացման բիզնես 60 քմ եւ նկուղային՝ 50 քմ տարածքով, ընդհանուրը՝ 110 քմ: Տարածքը կարելի է օգտագործել տարբեր բիզնեսի համար: Հասցեն՝ Ավետիսյան 67/6 (Ավետիսյան-Փափազյան խաչմերուկի հարեւանությամբ): ***Հեռ.՝ (091) 21 88 72:***

www.azg.am

## Հայտարարություն

Հուլիսի 22-ին, ժամը 11:00-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «ՊՐՈՖԼԻԹ ՍԳՍ» ՍՊԸ,** Արարատի մարզի Տափերական համայնքում կազմակերպում են հասարակական լսումներ համայնքում նախատեսվող ԱԳԼՃ կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան, Կոմիտաս 29 հասցեում:

## Հայտարարություն

Հուլիսի 23-ին, ժամը 11:00-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, Ա/Ձ Վաչիկ Սաֆարյանը, Արարատի մարզի Վեդի համայնքը** կազմակերպում են հասարակական լսումներ Վեդի-Վանաշեն խճուղու 2-րդ կմ նախատեսվող ԱԳԼՃ կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան, Կոմիտաս 29 հասցեում:

## ԿՈՐԵԼ Է

**«Արմավիրի ռեզերվային նավթամթերք» ՓԲԸ-ի** կլոր կնիքը եւ պետական ռեգիստրի N02 Ա 047650 վկայականը տրված 13 ապրիլի 2000թ. գրանցման N31.120.00865: Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: